

955/1111

2004

4676

1035. 484

ԽՈՐՀՐԴ ԵՕ՝ ՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՅ ԵՒ ՆՇԱՆԱՅ

ԵՒ ԽՈՐՀՐԴՈՅ ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՊԵՏՍ ՈՒՂԱՓԱԹ ՄԱՆԿԱՆՑ

ՆՈՐԻՆ

ՅՕՐԻՆԵԱԼ

Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՎԵՀԱՓԱԹ ՊԱՏՐԻԱՐԻՒ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԅ. ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

1848 — ՌՄՂԷ

28

U-33

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
540 EAST 57TH STREET
CHICAGO, ILL. 60637
U.S. DEPARTMENT OF AGRICULTURE
WASHINGTON, D.C. 20250
1918-1919

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԼՍՏՈՒԱԾԻՄԱՍՏ արքայն Սողոմոնն Ա.
 աւիաց գրքին մէջ մարգարէական հոգւով կը
 գրէ : « Իմաստութիւն շինեաց իւր տուն : և
 « կանգնեաց 'ի նմա սիւնս եօթնո : Ապաքէն
 իմաստութիւնն Աստուծոյ է մշանջենակից հօր
 բանն Աստուած Յիսուս Քրիստոս : որ իրեն
 յախտենական ճշմարտութեանը վրայ հաւա
 տով յուսով սիրով և բարեգործութեանք
 հաստատեալ քրիստոնեայնները իրեն կուսա
 կան և սրբարար մարմնոյն շնորհքներուն հա
 ղորդերով ամենքը ըրաւ իրեն անդամ. և ինքն
 ալ իրաւամբ և աներկբայելի ճշմարտութի
 եղաւ կենդանի և կենդանարար գլուխ բո
 լոր եկեղեցւոյն : որ է բազմութիւն ուղղաւ

Ը

փառ հաւատացելոց, թէ և ազգաւ՝ լեզուաւ
և տեղեաւ զանազան ալ ըլլան մեկզմեկէ, ու
բոնք ունին ողջամիտ վարդապետութիւն և
եկեղեցական աւանդութիւն ՚ի հաստատու
թիւն սուրբ հաւատոյ և յանայլայլելի պահ
պանութիւն Քրիստոսական սուրբ կրօնի, և
այս եկեղեցւոյս՝ որոյ գլուխն է Քրիստոս, և
ական յատկութիւնն է ըլլալ մի՛ սուրբ՝ կա
թուղիկէ՝ և առաքելական:

Մի է՝ քանզի եկեղեցին զանազան ան
դամներէ այսինքն ուղղափառ հաւատացեալ
ներէ միացեալ կապլած է ճշմարիտ գլխոյն
որ է Քրիստոս:

Սուրբ է՝ քանզի եկեղեցին այսինքն հա
ւատացեալները հազարդուած են գերազոյն
որբութեան որբաղնասուրբ գլխոյն Քրիստոսի
ուղղափառ դաւանութեամբ ճշմարիտ և
սուրբ հաւատոյ, և առաքինական դորձոց:

Կաթուղիկէ է՝ որ ըսել է անկերական
կամ ընդհանուր, քանզի եկեղեցին է լուսա
ւորուած և հաստատուած ողջամիտ աւետա
բանական վարդապետութեամբ, և ստորած
ուած է բոլոր աշխարհքի մէջ, և բարոզ
ուած ամէն ազգի և լեզուի մէջ:

31468-64



խանցանք Քրիստոսի սուրբ եկեղեցւոյն այս կատարելութիւնները բացայայտ վարդապետութեամբ շարակարգել: որ ըստ կարեաց մերոց երբ շնորհօքն Աստուծոյ յաջողեցաւ կատարելագործել: բարենախանձ ազգասէր մեծապատիւ Խաչֆայով Ստեփան աղայի բարեյօժար արդեամբքը տպեցաւ "առաջին անգամ" ՚ի Չիւռնիա ՚ի վարժարանի սրբոյն Մեարայայ յամի տեառն 1842: Եւ քանի մը տարիէն յետոյ երբ հատաւ, և ուղղները շատցան: կրկին տպեցաւ ՚ի Կոստանդնուպօլիս յաւուրս պատրիարքութեան մերոյ յամին 1847:

Բայց որովհետեւ գրաբառ ըլլալով ամեն մարդ պէտք եղածին չափ աղէկ և դիւրաւ չի հասկընալուն համար, բարեպաշտ և հոգեւէր անձինք Թախանձանօք ինդրեցին մեզ մէ: որ աշխարհաբառ լեզուի Թարգմանուի այս փոքրիկ գիրքս, որպէս զի իրենք ալ կարգան հասկընան, և սիրտերնուն փափայր լեցուի:

Ուստի անոնց փափայրին նայելով, և մեք աշխարհաբառի Թարգմանեցինք գրաբառին իմաստը նոյն պահելով, և ահա ՚ի փառս Աւ.

ԺԲ

առւծայ և 'ի սէր ազգիս այս մեր դպչն աչ
խառութեան արգիւնքը բարեպաշտ և ըն-
թերցասէր անձանց կ'ընծայեմ սիրով:

Կոստանդնուղօջտոյ Պատրիարք
Մատթեոս Արքեղիսկազոս:

1848 Ապրիլ 15

'ի Պատրիարքարանի ամենայն Հայոց

'ի Կոստանդնուպօլիս:

ԳՎՈՒԽ Ա.

Ինչ է եկեղեցին :

Եկեղեցի բառը յուրարեւել է . ու կը նշանակէ երեւելի բանի մը համար մեկտեղ ժողովուրդու կոչում մը . անոր համար շատուոր մարդոց՝ մի և նոյն գիտաւորութեամբ մեկտեղ ժողովուրդ կ'ըսվի եկեղեցի . ինչպէս, «Յայնժամ եկեղեցացոց արքայ Սողոմոն զամենայն ձերս խորայելի » . (Գ . թԿ . Ը . 1) :

Այս ազնիւ անունը խորհրդարար կը նշանակէ . Աստուծոյ սեպհական ժողովուրդները , որոնք Աստուածապաշտութեան յատուկ կրօնքով , և կերպ կերպ ձե-

սական արարողութիւններով կը միաբանին Մտուած գիտութեան հաւատոյ մէջ՝ Մտուծոյ անժըխ տելի օրէնքները պահելով և կատարելով :

Ինչպէս որ ՚ի հնումն Իսրայէլեան ազգը զՄտուած կը պաշտէին, ճանչնալով զանիկայ Մեհնակարող Արարիչ և Տէր՝ ամենուն խնամակալ, ու միաբան կը հաւատային, թէ Սեփայն Քրիստոս ամենուն փրկութեանը համար աշխարհ պիտի գայ :

Իայց երբոր ատենը հասաւ, ու աշխարհ եկաւ այն Փրկիչը, ու իրեն մեծահրաշ և փրկարար խորհրդովը յայտնելեցաւ, անոնք չար նախանձի և հպարտութեան մէջ յամուեալ՝ մտօք կուրացան, ու չի ճանչցան զանիկայ, ու փրկութեան սքանչելի լոյսը չընդու-

նեցին իրենց հոգւոյն մէջ, և
անոր համար զրկութեցան Աւետա-
րանական երանութիւններէն,
ու օտարացան Աստուծմէ, և
արքայութեան փառքէն: « Եւս-
տի՛ ինչ որ կը խնդրէր Իսրայէլ,
այն բանին չի հասաւ » . (Զ-ՊՆ
Ժա . 7) :

Աւետանց այս ողբալի կու-
րութեանը համար, և անօրէն ըն-
թացքներնուն համար՝ Ասայի
մարդարէն առաջուց խօսած է .
« Խաղաղութեան ճանքան չի
ճանչցան, և անոնց ճանքաներուն
մէջ իրաւունք չիկայ . որովհետեւ
ճճած են անոնց շաւիղները, ու
չի ճանչցան խաղաղութիւնը . ա-
նոր համար իրաւունքը վերցու-
անոնցմէ, ու արդարութիւնը չի
պիտի գայանոնց . երբ որ լոյսի կ'ըս-
պատէին, խաւար եղաւ անոնց .

ու երբոր անոր կը յուսային ,
մուծը պըտըտեցան ” (ՏԹ . 8) :

Ասոնց չարաչար մուտըտեալ
նը և կամակոր կուրուծեանը
վրայ՝ Յոբ ալ մարգարէաբար ը-
սած է . “ Յերեկը մուծի պիտի
իյնան . ու կէս օրվան ատենը
կուրկուրալով պիտի քալեն՝ իբր
թէ գիշեր է ” (Ե . 14) :

Իսկ այս նորին մէջ՝ հաւա-
տացելոց ամէն ազգերը միախոր-
հուրդ կամօք ընդունեցին յաւի-
տենական ճշմարտութիւնները ,
ու Քրիստոնէական սրբազան կը-
րօնքը , և միաբան կը հաւատան
ու կը խոստովանին , թէ Քրիս-
տոս՝ կենդանի և ճշմարիտ Աս-
տուծոյ որդին է , ինչպէս , “ Իու-
ես Քրիստոսն որդի Աստուծոյ
կենդանւոյ (Մատ . ԺԳ . 16) :
Սէք հաւատացար և ծանեար ,

եթէ դու ես Քրիստոս որդի
 Լուսուծոյ » . (Զօհ . զ . 70) :

Քրիստոնեաներուն այս ուղ-
 զախառ դուանութիւնը՝ Լուս-
 ուածային երանութեանց դուռն
 է , զանազան շնորհքներու ժա-
 ւանգաւորութիւն , և Քրիս-
 տոսի սուրբ եկեղեցւոյն անշար-
 ժելի հիմն է , « Ի վերայ այդք
 վիմի շինեցից զեկեղեցի իմ »
 (Կաթ . ժզ . 18) :

Ուստի Քրիստոնէից ժողովը
 իրաւամբ կ'ըսվի և է՝ Եկեղեցի
 Քրիստոսի . որովհետեւ ամէն
 հոգեւոր բարիքները , և Քրիս-
 տոսի խորհուրդներուն սրբարար
 շնորհքները բնգունեց , և արքա-
 յութեան փառքին հասցընող ա-
 ռաքինական գործքերը կը ցու-
 ցունէ իր վրայ : Ար ասնցմէ օ-
 տարացաւ հեռուցաւ հրէից ժա-

զովք՝ իր կամապաշտու թեամբը
 ու նախանձովք . և այս պատճա
 րաւ Յիսուս զանանք յանդիմա
 նելու համար , և Քրիստոնէից
 յոյսը հաստատելու համար՝ ը
 սաւ . « Վասն այսորիկ ասեմ
 ձեզ , զի բարձցի ՚ի ձէնջ արքա
 յու թիւնն Մատուծոյ , և տացի
 ազգի , որ առնիցէ զպտուղս նա
 րա » (Մատ . իա . 43) :

Ահեղեցին՝ Քրիստոսի խոր
 հրրշական մարմինն է՝ հաւատով
 և սիրով անոր հետ միացած . և
 ամէն մէկ հաւատացեալք՝ նոյն
 մարմնոցն մէյմէկ անդամներն են .
 որոնք՝ Քրիստոսի գերբնական
 պարգեւներէն հոգեւորական ա
 ճում և զօրութիւն կ'ընդունին .
 որ ինքն է ընդհանրական և ինքն
 իշխան գլուխ իր Ահեղեցւոցն
 վրայ . ինչպէս որ մարդուս մարմ

նոյն մէջ ամէն կենդանական և զգայական ներգործութիւններուն սկիզբը գլուխն է, ասանկ ալ Քրիստոսի խորհրդական մարմինը՝ այսինքն Ալեքեցիին՝ շնորհաց կենդանարար զօրութիւնները իր գերամբարձ գլուխէն այսինքն Քրիստոսէն կ'առնէ կատարելապէս . ինչպէս . « Ալ զնա եղ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք Ալեքեցւոյ , որ է մարմին նորա , և լուսն՝ որ զամենայն յամենայն ի լուսն » (Արժեք . ա . 22) :

Արկու կերպով գլուխ Ալեքեցւոյ կը ճանչնանք զՔրիստոս . մէյ մը որ՝ իր Ալեքեցիին վրայ , այսինքն բոլոր հաւատացեալներուն վրայ իշխելու և տիրելու ամէն կերպով իրաւունք ունի . որովհետեւ զամէնքն ալ իր փրկկարար արիւնսովք փրկեց մեզքի

դատապարտութենէն , ու իր
անպարտ մահուամբը ասրեցուց .
ու դժոխքին իշխանութենէն ա-
զատեց , մանաւանդ՝ իր կամաւ որ
չարչարանաց արդիւնքներովը զա-
մէնքը հազորդ ըրաւ իր Աստուա-
ծային փառքին : « Տաւա ինձ ա-
մենայն իշխանութիւն յերկինս և
յերկրի (ԱՊ . իբ . 18) :

Քրիստոս սիրեաց զեկեղեցի .
և զանձն իւր մատնեաց վննորա ,
զի զնա սրբեացէ սրբութեամբ
աւազանին բանիւ , զի կացուսցէ
ինքն իւր յանդիման փառաւոր զե-
կեղեցի » (Եփ . ե . 25 . 26 . 27) :

Արկրորդ՝ սրովհետեւ Քրիս-
տոս Ազեղեցիին հետ միացեալ
է կենդանացուցիչ շնորհքներով
և յատուկ սիրով , և մինչեւ ի
կատարած աշխարհի և յաւի-
տեան չի զատվիր անկէ , այլ իր-

րեւ գլուխ՝ իր բարոյական մարմինը այսինքն Ակեղեցին կը խընամէ կենդանական ներգործութիւններով, փրկութեան ճամբուն մէջ առաջնորդելով անոր, լուսաւորելով զանիկայ Աւետարանին ճշմարտութիւններով, զօրացնելով զանիկայ առաքինական գործքերուն մէջ, որ երկնից արքայութեան փառքին հասցնէ զանիկայ : « Աս ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի » (Մատ. իր . 20) :

« Ալ թէ ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ՚ի մէնջ . զի նովաւ կեամք և շարժիմք և եմք » (Գործք. ժէ . 28) :

Ահա ասոնցմով յայտնի կ'երեւի, որ Քրիստոս Ակեղեցիին ընդհանրական գլուխն է, ինքն

իշխան հրամայող, ծայրագոյն
 իշխող, ներքին կառավարիչ, և
 արդար դատաւոր ամենեցուն .
 իսկ Առաքեալները՝ և անոնց օրի-
 նաւոր յաջորդները՝ կ'ըսվին և
 են փոխանորդ Քրիստոսի, կամ
 անոր պաշտօնեաներ, նաև Քր-
 ժիստոսի Ակեղեցւոյն՝ տեսանելի
 հոգաբարձուներ . և ահա ասոնց
 կը վերաբերին այս վկայութիւն-
 ները : « Որ ընդունի զձեզ՝ զիս
 ընդունի (Մատ. Ժ. 40) :

Այսպէս համարեցին զմեզ
 մարդիկ իբրև զպաշտօնեայս
 Քրիստոսի և հաղարապետս խոր
 հըրդոցն Աստուծոյ (Ա. Կորն. 2 .
 դ. 1) :

Արածեցէք որ ՚ի ձեզ հօտդ
 է Աստուծոյ . վերահացու լինել՝
 մի իբրև ահամայ, այլ կամաւ
 ըստ Աստուծոյ ? (Պետ. Ա. Կա-

Թոս . Ե . 2) :

Վարձեալ Ահեղեցին՝ ըստ
ողջամիտ Աստուածաբանից այս-
պէս կը տահմանվի :

« Ահեղեցին՝ հաւատացելոց
ընտրեալ Ժողովն է՝ մկրտու-
թեան սրբազան կնիքը ունե-
ցող . և Աւետարանին ճշմար-
տութեանց վրայ մէկ հաւատքով
միաբանած . և Քրիստոսի ար-
դարացուցիչ խորհուրդներուն
հաղորդակից . և աստուածային
սլաշտամուտներու մէջ միաբան .
և աներեւոյթ խնամքով միշտ
կը սլաշտպանվի իր կենդանացու-
ցիչ դուրսէն՝ այսինքն Քրիստո-
սէն . և տեսանելի այցելու-
թեամբ կը կառավարվի սրբա-
զան Առաքելոց օրինաւոր յա-
ջորդներէն . այսինքն Ապիսկո-
ստներէն » :

Յիսուս Քրիստոսը, և ժամանա-
կէ մը ետքը՝ ոչինչէն կամ ուրիշ
էութեանէ ստեղծուած, ու չէ
թէ Հօր Աստուծմէ անժամանա-
կաբար ծնած յաւիտենական որ-
դի է 7 (ըսին) : Ասոնց կարգն է
Մակեդոն ամբարիշտն ալ, որ
ուրացաւ Հոգւոյն սրբոյ հաւա-
սար Աստուծոյ ըլլալը, և Հօր
ու Որդւոյ փառակից ըլլալը : Ա-
սոնց պէս են Նեստոր ու Ալեաի-
քէս, և ուրիշ շարափառներ,
որոնք աւետարանական բացա-
յայտ ճշմարտութեանց դէմ մո-
լար խօսքեր խօսելու համարձա-
կեցան . անոր համար ուղղափառ
սրբազան Հայրապետները ընդ-
հանրական ժողովքներով նդովե-
ցին այս հայհոյիչները, և Ակե-
ղեցւոյ անդամներէն զատեցին .
« Քրիստոսի արդարացուցիչ

խորհուրդներուն հաղորդակից 7
 ըսվելով՝ կը հասկըցվի, թէ Ա-
 կեղեցւոյ անդամներէն բնաւ մէ-
 կը չի զրկուիր սրբարար խոր-
 հուրդներուն մասնակցութենէն,
 բայց միայն չարութեանց մէջ
 յամառեալ և յանցանքի մը հա-
 մար իրաւամբ բանադրեալ մար-
 դիկ հաղորդակից չեն, և Ակե-
 ղեցւոյ սրբարար խորհուրդները
 ընդունելու և շնորհքները վայե-
 լելու համարձակութիւն չու-
 նին :

Աստուածային սրաշտա-
 մունքներու մէջ միաբան 7 ըսվե-
 լով՝ կ'իմացուի Ակեղեցւոյ վախ-
 ճանական գործը, որով Ակեղե-
 ցին երանութեան սրտակը կ'ըն-
 դունի Աստուծմէ. որովհետեւ
 գիտէ Ակեղեցին ու կը ճանչնայ
 Աստուծոյ գերազանց մեծութիւնը,

անկէ եկած գերբնական շնորհ
ները, ու պատրաստուլած երա-
նաւէտ փառքը. անոր համար
միշտ Աստուծոյ երկրպագելու
պաշտօնէն ետ չի մնար, ու անոր
ամենաբարի կամքին ծառայելու
մէջ առաջ երթալու կը ջանայ:

«Աներեւոյթ խնամքով միշտ
կը պաշտպանուի իր կենդանացու-
ցիչ գլուխէն՝ այսինքն՝ Քրիստոս-
սէն՝ ու ըսկեցաւ. վասն զի Ակե-
ղեցին Քրիստոսի բարոյական
մարմինն է՝ հաւապքով և սիրով
անոր հետ միացած. և ինքն Քր-
քիստոս՝ Ակեղեցիին գլուխն է,
որ ներքին բարեբարութեամբ
ամենքը կը սրբացընէ ու կը ղօ-
րացընէ:

Իսկ Ակեղեցիին արտաքին կա-
ռավարութիւնը, ու այցելու-
թիւնը յանձնեց իր Առաքեալ-

ներուն , և անոնց յաջորդ եպիս-
կոսոսներուն , և երէցներուն .
ասոր համար ըսվեցաւ էն վերջը ,
Թէ՛ « Տեասնելի այցելու թեամբ
կը կառավարվի սրբազան Մա-
քեկոց օրինաւոր յաջորդներէն ,
այսինքն Ապիսկոսոսներէն » : Գը-
նացէք այսուհետեւ աշակերտե-
ցէք զամենայն հեթանոսս . մը-
կրտեցէք զնոսս յանուն Հօր՝
և Արդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ ,
ուսուցէք նոցա սահել զամենայն
զոր ինչ պատուիրեցի ձեզ (Մատ-
իւ . 19 . 20) :

Օ երիցունս այսուհետեւ ա-
ղաչեմ , իբրեւ երիցակից՝ և վը-
կայ չարչարանացն Քրիստոսի , որ
և հանդերձեւոց փառացն յայտ-
նելոց հաղորդ . արածեցէք որ ՚ի
ձեզ հօտդ է Մտուծոյ » (Պեթ .
Ա . Կաթ . Ե . 1) :

Պ Ա Ս Ի Խ Ի

Ե՛րբ եղաւ Եկեղեցին սկիզբը :

Մտտուած իր Եկեղեցին աշխարհքին սկիզբէն հաստատուցնեքքին և սուրբ ազգեցու թեամբ զամէն մարդ Մտտուած գիտութեան և Մտտուած պաշտութեան հրաւիրելով, ու ճշմարտութիւնը ճանչնալու, և իւր կամքը կատարելու համար պէտք եղած բաները ամենուն յայտնելով, Նահապետներէն սկսած մինչեւ Կարգարէններուն վերջը Մտտուած պաշտութեան հարկաւոր գիտելիքները տարածելով :

Չէ թէ միայն մէկ հագիի մը յայտնելով Մտտուած պաշտութեան բոլոր խորհուրդները, որ



31460-64

Քրիստոսի մարդեղութեան շը նորհրովը կատարելութիւն պիտի գտնային այլ . ատեն ատեն այլ և այլ մարդոց զանազան բաներ կ'իմացընէր , զորօրինակ՝ բան մը մեր նախահօր Ադամին կը յայտնէր , ուրիշ բան մը՝ Նոյին ընել կուտար . Աստուած պաշտութեան անտեսութիւն մը՝ Աբրահամին կը յանձնէր , ուրիշ յայտնութիւն մը՝ Կովսէօին ջրցուց՝ ամէն մէկ՝ Նահապետներուն ու Վարդարէներուն մասնաւոր աղեցութիւններ ընելով , որոնց ամէնն ալ Աստուածային տնօրէնութեան և մարդասիրութեան մի և նոյն խորհուրդին կը նայէին :

« Վազում մատամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր



մարգարէիւք » (Լ, Էր . ա . 1) :

Աւստի Աստուած պաշտու-
թեան խորհուրդը ամէն մէկ
դար անսրահաս ծաղկելու վրայ
էր . թէպէտ երբեմն կռապաշ-
տու թեան խաւար տգիտութիւ-
նը կ'երեւէր , բայց Աստուած-
պաշտութեան սոսցմառ լոյսը
Աստուծոյ Լ, կեղեցիկն ամէն ա-
տեն անսրահաս բլլալով , կը փա-
րատէր սնտի պաշտամունքնե-
րուն խաւարը՝ երեւան հանե-
լով կամ խայտառակելով հեթա-
նոսութեան ծուռ կարծիքները :

Ինչպէս որ Լ, զիս մարգարէն
ճշմարիտ Աստուծոյ նախանձովը
վառված՝ խայտառակեց Ա. քաար
թաղաւորը , որ Ռահաղու կուռ-
քը կը պաշտէր , սե իր սուտ մար-
գարէնեբովը այն կռամուղու թեան
կը յովարեցընէր Իսրայէլի մռ

ղովուրդներէն շատերը :

Իսկ Մատուծոյ մարդարէին ջերմեռանդ աղօթքովք՝ ամէնուն աչքին առջին յայտնի եղաւ ճշմարիտ Մատուծոյ ամենակարող զօրութիւնը . ուստի բոլոր ժողովուրդ երեսնուն վրայ գետինը իյնալով, բարձր ձայնով ասանկ կը խոստովանէին : « Մրդարեւտէր՝ նա է Մատուած . տէր նա է Մատուած » (Գ . ԹԿ . ԺԸ , 39) :
 Մհա հաս ճշմարիտ Մատուած պաշտութեան լոյսը ծագեց , և կապաշտութեան խաւարը փարատեց : « Դադեաց ՚ի խաւարի լոյս ուղղոց , ողորմած՝ գթած՝ և արդար է տէր » (Սաղ . ՃԺա . 4) :

Մյս Կեղեցիին առաջուց ՚ի վեր կը պաշտարանովէր Մատուածային այցելութեամբ և կերպ կերպ խնամքներով . անաստուա

ծուծեան վիճակէն ազատ մնալու համար . ըստ այնմ, թէ՛
 «Յիշեա՛ զժողովուրդքս զոր ըստացար ՚ի սկզբանէ, փրկեցեր զվիճակ ժառանգուծեանքս »
 (Սալ. հո. 2) :

Մ. յս վկայուծիւնով Մատուծոյ Ակեղեցւոյն մշտնջենաւորուծիւնը կը հաստատուի . ինչպէս որ Ազնիկ Կողբացին ասանկ կը բացատրէ՝ ըսելով, «Ակեղեցի Մատուծոյ ՚ի սկզբանէ աշխարհէր, զորմէ և Գաւթի ՚ի Հոգւոյն սրբոյ ուսեալ մատուցանէր զազոթս, թէ յիշեա՛ զեկեղեցիքս՝ զոր ստացար ՚ի սկզբանէ » (Վերհ. Գ. 229) : Մ. յս Ակեղեցին՝ կ'ըսվի հին Ակեղեցի, որոյ անդամները խորայեւացւոյ ազգն էր . որոնք թէպէտ ունէին Մատուծւալաշտուծիւն՝ դրական կամ

Սովորական օրէնքէն , բայց անկատար էին Աստուածգիտութեան ծանօթութիւններու մէջ :

Իսկ Քրիստոսական Ակեղեցին՝ կ'ըսովի նոր Ակեղեցի . որոյ անդամները՝ Քրիստոսի մարդեղութեանը և փրկարար տնօրէնութեանը հաւատացող , և յանուն ամենասուրբ Արքայորդութեան մկրտեալներն են . որով ունին այն կատարեալ Աստուածգիտութիւնը ՚ի Հայրն ամենապաշտօնաւոր ՚ի Մարդին միածին , և ՚ի սուրբ Հոգին յանեղն և ՚ի կատարեալն : Ալ Աւետարանական ճշմարտութեան լուսաւոր ճանապարհին կատարեալ ուսմանը հետեւելով , սրբազան Աւետարանիչներու և Առաքեալներու նախաբողոքով Քրիստոնէական ողջամիտ վարդապետութիւնը կ'ըն-

դունին . ըստ այնմ « Օր մեքն
 քարոզեմք և խրատեմք զամենայն
 մարդ , և ուսուցանեմք զամե-
 նայն մարդ ամենայն հոգեւոր ի-
 մաստու թեամք , զի կացուսցուք
 զամենայն մարդ կատարեալ ՚ի
 Քրիստոս Յիսուս » (Կղ՞ . ա .
 28) :



Գ Լ Ո Ւ Լ Ե Գ

Ինչով կը զանազանի հին Եկեղեցին
նոր Եկեղեցին :

— Ինչ Եկեղեցին այսինքն հը-
րեից ազգը՝ այս նոր Եկեղեցին
հետ՝ այսինքն Քրիստոսնեից հետ
բազմաատելու ըլլանք, շատ սա-
կասու թիւններ կը գանանք հին
Եկեղեցին վրայ :

Նախ՝ անոր համար, որ Աե-
սիայի մեր կենարար Յիսուսին
գալստեանը ասպաղայ շնորհքնե-
րը և փառքերը վայելելու՝ պատ-
րաստեալ և սկսեալ Եկեղեցի մը
կրնանք կոչել զանիկայ, որ այն
խոստացեալ Աեսիայն երբոր աշ-
խարհք եկաւ, իր Մատուածա-
վայել հրաշագործու թիւններովը

Թէպէտ ամէնուն յայտնի կը
 ցուցունէր, թէ ինքն էր աչ-
 խարհիա Փրկիչը Յիսուս. մանա-
 լանդ որ, մարդարէ՛ներուն
 խօսքերն ալ կը վկայէին, թէ ան
 է Քրիստոսը, որ խրկուեցաւ
 հրէից և հեթանոսաց Փրկիչ և
 կեցուցիչ. բայց հրէաները անոր
 շնորհքները ու փառքերը անար-
 գելով, կամաւոր կուրու թեամբ
 մտաց սկըսան նախանձիլ Յիսու-
 սին վրայ ու ատել զանիկայ. ա-
 նանկ որ՝ անիրաւ զրպարտու-
 թիւններով խաչի մահուան ալ
 դատապարտել համարձակեցան.
 որով բոլորովն զրկուեցան նոյն
 փրկարար շնորհքէն, և անոր
 Նստուածու թեան ամենացան-
 կալի փառքէն: «Յիւրան եկն,
 և իւրքն զնա ոչ ընկալան, (Յժ. 4.
 ա. 11):»

Այլ խորացել երթայր զհետ
օրինացն արդարութեան, և յօ-
րէնս արդարութեան ոչ ժամա-
նեաց ո (Հոմ. Թ. 31) :

Իսկ այս Քրիստոսական նոր
սուրբ Ալեքսանդրին համար իրա-
ւամբ կրնանք ըսել, թէ՛ այս ա-
նանկ Ալեքսանդրին է, որ փրկու-
թեան խորհուրդներով կատա-
րեալ է, և Հօր Աստուծոյ որդե-
գիր ըլլալու շնորհքը ստացած է,
և Աստուածակտութեան երա-
նական փառքին ժառանգ ե-
ղած է :

Արտահետեւ Քրիստոսական
սուրբ Ալեքսանդրին կը խոստովանի
ու կը հաւատայ՝ կենարար Յի-
սուսի փրկարար մարդեղութեա-
նը, և անոր Աստուածադործ հը-
րաչքներուն, և շնորհատիւն
ճշմարիտ վարդապետութիւննե-

բուն . ու կը յուսայ՝ որ մեղքե-
 բուն թողութիւն կը գտնայ 'ի
 ձեռն զղջման՝ արդեամբ կամա-
 ւոր մահուան և անպարտ խաչին
 (Յիսուսի փրկչին մերոյ : « Իսկ
 որք ընկալանն զնա , ետ նոցա իջ-
 խանութիւն որդիս Աստուծոյ լի-
 նել՝ որոց հաւատասցեն յանուն
 նորա . (Յովհ . ա . 12) : Հեթա-
 նոք՝ որք ոչ երթային զհետ ար-
 դարութեան , հասին արդարու-
 թեան . այնմ արդարութեան՝ որ
 'ի հաւատոց անտի » (Հովհ .
 թ . 30) :

Արկրորդ՝ հին Ակեղեցին՝ Քր-
 թիստոսի ապագայ փրկարար խոր-
 հուրդներուն միայն օրինակները
 ու ձեւակերպութիւնները կը
 տեսնար . և ան ալ՝ Աստուծոյ
 ծառաններուն՝ այսինքն մարգարե-
 ներուն և նահապետներուն ձեռ-

քովը զանազան կերպով յայանը-
վելով, երբեմն օրինակաւ մը, և
երբեմն մարդարեւական խօսքով
մը, զօրօրինակ՝ իր կաւսական ծը-
նունդը օրինակով մը երեւցուց
Վանիէլ մարդարեւին ձեռքով՝
« Ի վէմն հասեալ ի լեռնէն ա-
ռանց ձեռին » (Վան. բ. 45) :

Եւ Նսայի մարդարեւին ձեռքովը
յայտնի խօսքով. « ահա կոյս յը-
զասցի և ճնցի որդի » (Է. 14) :

Իբ խաչվելուն խորհուրդը
յայտնեց Հայր Վրբահամին՝
երբոր Մահակը զոհ ընելու հը-
րաման ըրաւ. որ անոր տեղը սա-
բեկ ծառէն վար կախված խոյր
երեւցուց. (Օնն. իբ. 13) :

« Վրբահամ ցանկացաւ տեսանել
զօրն իմ (այսինքն զօրինակն իմ),
ետես և ուրբախ եղեւ » (Զօհ.
բ. 56) :

Եւ այս բանը՝ դարձեալ Եսայի մարգարէին բերնովը ալ աւելի յօտակ քարոզվեցաւ թէ՛
 « Իբրեւ զոչխար ՚ի սպանդ վարեցաւ . և իբրեւ զորջ առաջի կարչի անմեռունչ կայ . այնպէս ոչ բանայ զբերան իւր » (Տգ . 7) :

Ահա ասանց ամէնը մարգարէներուն ու նահապետներուն ձեռքովը կը գուշակվէր հին Եկեղեցւոյ մէջ , բայց այն օրինակներէն և այն գուշակութիւններէն՝ Յիսուսի փրկագործ խորհուրդներուն շնորհքները և փառքը արդեամբ չէին երեւար : Իայց Քրիստոսի այս նոր սուրբ Եկեղեցւոյն մէջ՝ յայտնի տեանը վեցաւ փրկութեան այս ամէն խորհուրդները . չէ թէ օրինակներով , այլ աստուածային յայտնի հրաշքներով՝ և շնորհքներով՝ և

յաւիտենական երանութիւն
 խոստանալով ճշմարտապէս . չէ՞
 թէ մասնաւոր կամ մութ ծանօ-
 թութեամբ մը , այլ լեցուն՝ ան-
 սրահաս՝ և լուսաւոր յայանու-
 թեամբ , չէ՞ թէ մարդարէնեբուն
 ու նահապետներուն ձեռքովը ,
 այլ մեր կենարար Յիսուսին ձեռ-
 քով , որ շնորհաց տէրն է , և ճշ-
 մարտութեան հեղինակն է : « Բա-
 զում մասամբք և բազում օրինա-
 կօք կանխաւ խօսեցաւ Մտուած
 ընդ հարս մեր մարդարէիւք . 'ի
 վախճան աւուրցս այսոցիկ խօսե-
 ցաւ ընդ մեզ որդւոյն՝ զոր եղ-
 ժառանգ ամենայնի , որով և զյա-
 ւիտեանս արար » (Աբր . Թ . 1) :
 Բայց ձեր երանի է աչաց՝ զի տե-
 սանեն , և ականջաց ձերոց՝ զի
 լսեն , ամէն ասեմ ձեզ , զի բա-
 զում մարդարէք և սրգարք ցան

կացան տեսանել՝ զոր տեսանէքդ ,
 և ոչ տեսին , և լսել՝ զոր լուսայքդ ,
 և ոչ լուան 7 (Մատ . Ժգ . 16) :

Արրորդ՝ հին Ակեղեցին՝ թէ՛
 սկզբնական մեղքէն , և թէ՛ ներ-
 գործական մեղքէն ներքին ճշ-
 մարիտ սրբութեամբ չէր կրնար
 մաքրրիլ . զի թէպէտ մեղքի հա-
 մար զսհեր ու ողջակէզներու պա-
 տարագներ կը մատուցանէին ,
 բայց այն պատարագները անոնց
 մեղքերը քաւելու չափ հաճելի
 չեղան Աստուծոյ . այլ միայն բա-
 րեպաշտական գործք մը և Աստ-
 ուածպաշտութեան ցոյց մը կը
 սեպիլէր . մանաւանդ որ՝ այն զո-
 հերով կը նշանակիլէր Քրիստոսի
 ճշմարիտ պատարագին օրինակը ,
 որ ճշմարտապէս պատարագ վե-
 ցաւ մեր մեղքերուն քաւու-
 թեանը համար՝ խաչին փրկաւէտ

սեղանինն իրայ . ինչպէս որ եղաւ
 Սոխէօսին ատենը , (Վեպ . թ .
 24) : Ղեդէօնին ատենը , (Վեպ .
 ք . 21) : և Եղիային ատենը .
 (Գ . թ . 4 . ժ . 38) : Եւ այս ամէն
 մատուցված պատարագները զօ-
 րութիւն չունէին մեղքերը քա-
 ւելու , և ներքին սրբութեան
 ստացումը տալու . ինչպէս որ
 գրված է . « Ինդ զոհս և ընդ
 պատարագս ոչ հաճեցար . լսելիս
 հաստատեցեր ինձ . զողջակէզս՝
 և զվասն մեղացն ոչ խնդրեցեր .
 (Սաղ . լթ . 7) : Քանզի ոչ կարէր
 արիւն նոխազացն և ցլուց բառ-
 նալ զմեզս » (Երբ . ժ . 4) :

Իսկայ Բրիտոսի այս նոր Ե-
 կեղեցին՝ որ է հաւատացելոց
 ժողովը , ունի կատարեալ ներքին
 սրբութիւն և փրկութիւն ի մե-
 զայ՝ արդեամբ ճշմարիտ պատա-

բաւին՝ անբիծ և անարատ դառին
 Աստուծոյ Յիսուս Քրիստոսին ,
 որ աշխարհիս մեզքը շարկելով
 խաչին վրայ պատարագ վեցաւ ,
 ու իր անպարտ մահուամբք մեզ
 մեզքի սղծութենէն ազատեց՝
 իր արդարացուցիչ արեամբք
 մաքրելով , և իր Ակեղեցին՝ իր
 սրբութեանը և արդարութեանը
 հաղորդակից ըրաւ . որով Քրիս-
 տոսնից սուրբ Ակեղեցին Աս-
 տուծոյ դառնուկին անմեղու-
 թիւնը ու սրբութիւնը ունե-
 ցաւ : « Ահաւասիկ դառն Աս-
 տուծոյ , որ բառնայ զմեզս աշ-
 խարհի . (Ծօն . ա . 29) : Արով
 կամօք և մեք սրբեցաք ՚ի ձեռն
 պատարագի մօրմնայն Յիսուսի
 Քրիստոսի միանգամ , (ԱԲԷ . Ժ .
 10) : Աքիւնն Յիսուսի որդւոյ
 նորա սրբէ զմեզ յամենայն մե-

զայս " (304 . Ա . Կաթ . ւն . 7) :
 Չորրորդ՝ հին Աղեղեցին հա-
 ղորդակցութիւն չունէր գեր-
 բնական յաւիտենական և Աստ-
 ուածային կենդանութեան հետ .
 որովհետեւ Աստուածային սրբ-
 բարար շնորհքը տակաւին ազ-
 բերացած չէր անոր մէջ . որով
 կարող ըլլային այն հոգեւոր կեն-
 դանութեան ընդունակ ըլլալու
 գոնէ պատրաստութիւն մը ստա-
 նալ . զորօրինակ՝ ինչպէս որ թա-
 վանցիկ մարմինները՝ այսինքն , օ-
 գը՝ ջուրը՝ ասպակին՝ և այլն , կըր-
 նան ընդունիլ արեւին լոյսը , և
 ասոր ներհակ՝ թափանցիկ զօրու-
 թիւն չունեցող մարմին մը անըն-
 դունակ է լոյսի , ասանկ ալ Իս-
 րայէլեան ազգը չունենալով այն
 աւետարանական կատարելու-
 թիւնները , և շնորհական օրէնք-

ներքը , որ մարդս յաւիտենական
կենդանութեան գերբնական
լուսոյն կը պատրաստէ , զըկըված
ու անընդունակ էին անմահ եւ
բանութեան , անոր համար Մա-
ւիթ մարգարէն նմանութեամբ
խօսելով՝ կը ցուցունէր հին Ա-
կեղեցիին այս պահասութիւնը ,
որ ինքն ալ նոյն Ակեղեցիին մէջն
էր . և ասանկ կ'ըսէր . « Մ. քէն
է տէր աղբիւր կենաց , և լու-
սով երեսաց քոց տեսանեմք զլոյս »
(Սալ . լե . 10) :

Իայց Քրիստոսի նոր Ակեղե-
ցին՝ աւետարանական կատարե-
լութեան շնորհական օրէնքով
հաղորդ եղաւ Աստուածային հո-
գեւոր անմահ կենդանութեան ,
որովհետեւ այն սրբարար շնորհ-
քը , որ Յիսուսի միջնորդու-
թեամբ ունեցաւ , Աստուածաւ

յին գերբնական կենդանու
 թեան հազորդ և ընդունակ ը-
 րաւ այս սուրբ Ալեքեղեցին ։
 Աւստի հիմայ Քրիստոսի Ալե-
 զեցին՝ տիրապէս և իրաւամբ ու-
 նի այն հողեւոր և երանաւէտ
 կենդանութիւնը , որ Քրիստոսի
 շնորհքովս ստացաւ ։ ըստ այնմ՝
 « Այս կենդանի եմ , և դուք կեն-
 դանի վնեւոյ էք . (3օհ . Ժգ .
 19) ։ Աւ կեանքն յայանեցաւ ,
 և տեսաք՝ և վկայեմք՝ և սրտ-
 մեմք ձեզ զյաւխոննական կենա-
 ցըն , որ էր առ հօր՝ և երեւե-
 ցաւ մեզ » (3օհ . Ա . կաթ .
 ա . 2) ։

Անդերորդ՝ հին Ալեքեղեցւոյ
 Ժողովուրդներուն՝ միայն երկրա-
 ւոր բարիք կը խոստանար ամե-
 նաբարին Աստուած . որովհե-
 տեւ երկնաւոր յաւխոննական

բարիքներէ մերժելով՝ ամբողջովն զինչակի մէջ ըլլալով, տակաւին երկնաւոր բարութեանց ու փառաց ժառանգ չէին. ուստի թէ որ ուղէր Աստուած արժանաւոր մէկը բարութեամբ մը մեծարել, միայն երկրաւոր բարիք կը խոստանար անոր, ու միայն անցաւորը ժառանգելու հրաման կուտար, և չէ թէ հոգեւորը, այլ մարմնաւորը տալ կ'ուղէր անոնց. անոր համար երբ որ Աբրահամ արժանի եղաւ Աստուծով պարգեւ ընդունելու՝ իր բոլորանուէր հնազանդութեանը համար, նայէ՛ ինչ տեսակ պարգեւ կը խոստանայ անոր Աստուած.

“ () Բհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո իբրեւ զաստղս երկնից բազմութեամբ, և

իբրեւ զաւազ առ ամին ծովու .
 և ժառանգեսցէ զաւակ քո զքա-
 զաքս հակառակորդաց իւրոց ”
 (Օճն . իբ . 17) : Ամանապէս
 Յակոբ նահապեաինն ալ՝ որ մօրը
 արգանդէն ընտրելով սիրեց ,
 մարմնաւոր ու երկրաւոր բարիք
 կը խոստանայ ՚ի նշան սիրոյ .
 “ Օ ՚ի զերկիրդ՝ յարում դուդ
 ննջեցեր , քեզ տաց զգա և զա-
 ւակի քում . և եղիցի զաւակ քո
 իբրեւ զաւազ երկրի . և ընդար-
 ձակեսցի ՚ի ծովակողմն , և ընդ-
 արեւելս , և ընդ հիւսիս , և
 ընդ հարաւ ” (Օճն . իբ . 13) :
 Ասոր պէս է երկրորդ Օրինաց
 մէջ գրվածն ալ . “ Օ քոչ լերութ
 առնելոյ՝ որպէս պատուիրեաց
 քեզ տէր Աստուած քո . և մի
 խոտորիցիս յաջ , և մի յահեակ .
 ըստ ամենայն ճանապարհին՝ զոր

սխառութիւնաց քեզ տէր Աստուած մեր գնալ. զի հանգուցէ զքեզ՝ և բարի արասցէ քեզ, և երկայնօրեայք լինիցիք յերկրին զոր ժառանգիցէք » (Ե . 32) :

Իսկ այս նոր Աշկեղեցիին այսօրինքն Քրիստոնէից՝ կը խոստանայ (Յիսուս՝ երկնային և յաւիտեանահան բարիք . և չէ՛ թէ այս ցաւալից աշխարհիս անցաւոր կեանքը ժառանգելու յոյս մը կուտայ իր հետեւողներուն , այլ իր աւետարանական վարդապետութեան լուսովը՝ յաւիտեանական կեանքի կ'առաջնորդէ . և համարձակութիւն կուտայ իր Աշկեղեցիին՝ երկնից բարութիւնները՝ և իր արքայութեան ամենացանկալի փառքը խնդրելու . որովհետեւ այս նոր սուրբ Աշկեղեցւոյս մէջ յայտնի և սփռեալ

Քրիստոնէական շնորհքը՝ ամէն
 նաեւ ալ համարձակու թիւն կու-
 տայ, որ երկնից արքայու թիւնը
 և Մատուածային յաւիտենական
 վառքը վայելելու վրայ աներկ-
 բայ յոյս ունենան. «Այս եւ մը լոյս
 աշխարհի, որ դայ զկնի իմ, ընդ
 խաւար մի գնացել, այլ ընկալցի
 զլոյսն կենաց» (Յժ. Ը. 12):
 «Ինեդ բեցէք նախ զարքայու թիւն
 Մատուծոյ և զարդարու թիւն նա-
 բար, և այդ ամենայն յաւելցի
 ձեզ. մի այսուհետեւ հոգացէք
 վասն վաղու ին՝ զի վաղիւն վասն
 իւր հոգացի (Մատ. Գ. 33):
 Քանզի երկուեցաւ շնորհն Մա-
 տուծոյ փրկիչ ամենայն մարդկան,
 որ խրատէ զմեզ՝ զի ուրացուք
 զամբարշտու թիւն և զաշխար-
 հական ցանկու թիւնս. զգաս-
 տու թեամբ և արդարու թեամբ

և Աստուածայշտու թեամբ կեց-
ցուք յաշխարհի . և անկեպացուք
երանկի յուսոյն և յայանու-
թեան փառաց մեծին Աստուծոյ
և փրկչին մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի . (Տէր . Բ . 11) :

Ասանցմէ ՚ի զսառուբիչ շատ
յայանի սպառցոյցներ ալ կը գրա-
նանք՝ Բարայէ լոյցուոց ճին Ակեզե-
ցւոյն ու Քրիստանկից նոր սուրբ
Ակեզեցւոյն մէջ ան զը կը զամ տար-
բերու թեան փրայօք : Անիկայ՝
գալու ժամանակներուն փրայ
ճանօթու թիւն ունէր , իսկ ա-
սիկայ՝ բուն ճշմարտութիւնը
յայանի ու ներկայապէս ունի .
անիկայ՝ յանցաւոր վիճակի դա-
տապարտութեան մէջն էր , իսկ
աս՝ արդարացեալ վիճակի փրբ-
կութեան մէջն է . ան՝ հեռու
էր Աստուածային գերբնական

սարգեւներէն ու շնորհքներէն ,
 իսկ աս՝ խիստ մօտ ու ժառանգ
 գաւորեղաւ ամէն բարիքներուն :
 Ուրեմն ալ լրմնցունենք հոս մեր
 բաղդատու թիւնը՝ սրբազան ա-
 ռաքելայն Պօղոսի խօսքովը . թէ՛
 « Եստուհեաեւ ոչ էք օտարք և
 սանդուխտք , այլ քաղաքակիցք
 սրբոց , և ընտանիք Եստուծոյ »
 (Եփե . բ . 19) :



Գ Լ Ա Ի Խ Գ .

Եկեղեցին երեք կերպ է .

Առաջինը՝ կ'ըսվի զինուոր-
 րեալ Ակեղեցի, որովհետեւ երկ-
 րիս վրայ եղած հաւատացեալ-
 ները՝ որոնք Վրիսաոսի բարոյա-
 կան մարմինը ըլլալով՝ Վրիսաոսի
 Ակեղեցի կ'ըսվին, աւետարա-
 նական նոր օրինաց, և Աստուծոյ
 սուրբ Հոգւոյն շնորհացը անյաղ-
 թեւի զէնքերով զինուորած են .
 և ասոնցմով կրնայ զօրանալ Ակե-
 ղեցին՝ սատանայական մոլու-
 թիւններու դէմ, և մարմինին
 ցանկութիւններուն դէմ, ասոնց-
 մով արիապէս կը յաղթէ ու կը
 հալածէ սատանային ստրասաւոր-
 ները՝ այսինքն աւետարանի յայտ-

նի ճշմարտութեանց դէմ հակառակող պինտ գլուխները, ուղղափառ Քրիստոսնէ ու թեան հըրաշալի դրօշակը քաշելով ամէնուն գիմացը, և առաջնորդ ունենալով իր ամենայաղթ զօրադըլուխը, որ է տէր Յիսուս, ասնցմով կրնայ ծեծկըլիլ Աշկեղեցին՝ բարոյական և հոգեւորական պատերազմներու մէջ, քակելով կործանելով հոգեկորոյս մոլութեանց՝ աշխարհային և մարմնաւոր խորհրդոց՝ ճշմարտակորոյս աղանդաւորներու չար մոլորութեանց պարփայները ու բերդերը :

Այս դէնքերով կը պաշտպանվի Աշկեղեցին ամէն հակառակառակ մարտ թշնամիներէն, և Քրիստոսնէական ուղղափառ հաւատքին մէջ և սրբազան Աստուած-

պաշտու թեան մէջ՝ ասանցմով ա-
 պահով կը մնայ . և մեծ յուսով
 կը տեսնայ՝ երանական փառաց
 պսակը իրեն համար պատրաստը-
 ված . ասով՝ երանելին Պօղոս ա-
 ռաքեալ սիրտ կուտար Ահեղե-
 ցիին՝ ըսելով . « Եսուհեանե-
 ղօրացարձք տէրամբ և կարո-
 ղու թեամբ զօրութեան նորա .
 և զգեցարձք զսպառապինու-
 թիւն Աստուծոյ , զի կարող լի-
 նիջիք կալ բնդ գէմ հնարից սա-
 տանայի (Արժ . զ . 10) : Օհն
 զինուորութեան մերոյ ոչ է
 մարմնուոր , այլ զօրաւոր յԱս-
 տուծոյ , սա ՚ի քակելոյ զամուրս »
 և այլն (Բ . Կրն . Ժ . 4) :

Արկրորդը կ'ըսալի յազմական
 Ահեղեցի . որովհետեւ հաւա-
 տացեալները՝ քանի որ այս աշ-
 խարհիս մէջն են , զինուորի նը-

ման՝ Քրիստոսի շնորհքներով զին-
 ու որած՝ թէ որ քաջութեամբ
 կը յաղթեն՝ հոգիին դէմ ծեծկը-
 վաղ բոլոր թշնամիները, ու սըր-
 բութեամբ կ'ելլեն այս մարմի-
 նէն, ան ատենը կը միաւորին
 Քրիստոսի ու հրեշտակաց հետ՝
 անդրանկաց յաղթական Նկեղեց-
 ւոյն մէջ՝ որ է վերինն Նշուա-
 ղէմ, և հոն յուսով կ'ըստասեն
 Նշուածային փառաց տեսու-
 թեանը, և դատաստանին օրը
 կատարեալ վարձք առնելու՝ նո-
 բէն ծնանելով երջանիկ ու ան-
 մահ մնալու համար. որ այն տեղ՝
 ամէն մէկուն առաքինական քա-
 ջութեանը փոխարէն՝ արժանա-
 ւոր պսակ պիտի բաշխուի: Նյս
 բանին վրայ ուրախանալով կը
 պարծենայ սրբազան Նաաբեալը-
 ըսելով, «Օ քարուք պատերազ

մըն պատերազմեցայ . զընթացսն
կատարեցի , զհաւատոսն պահեցի .
այսուհետեւ կայ մնայ ինձ ար-
դարութեան պատկն » (Բ . ՏԻՏ .
Դ . 7) :

Ահա երանելեաց այս ժողովք եր-
կինքն է , որոնք կ'ըստինն յաղթա-
կան Ալեքեղեցի . որովհետեւ հոն
բոլոր սուրբերը յաղթական պը-
սակով փառաւորված՝ հրեշտա-
կաց բիւրաւոր բանակներուն
հետ մէկ բերան ըլլալով կը փա-
ռաբանեն ամենատուրք Արքոր-
դութիւնը , և Աստուծոյ փառ-
քը կը վայելեն . այս ամէն ըսած-
նիս յայտնի կ'իմացիլի սրբազան
Առաքեալին վկայութիւններով .
« Այլ մատուցեալ էք 'ի Սիովն
լեառն , և 'ի քաղաք Աստուծոյ
կենդանւոյ՝ Արուսաղէմ յերկի-
նը » . և 'ի բիւրաւոր բանակս հը-

րեշտակաց . և Այկեղեցիս անդ-
րանկաց դրելոց յերկինս , և առ
դատաւորն ամենեցուն Մատ-
ուած , և յոգիս արդարոց կա-
տարելոց (Աբր . ժբ . 22) :

Աւստրա ամենեքին վկայեալք
ի հաւատոցն՝ չև ևս ընկալան զա-
ւետիսն . Մատուծոյ վասն մեր լա-
ւագոցն համարեալ՝ զի մի առանց
մեր կատարեսցին (Աբր . ժա . 39) :

Արրորդ՝ նիւթական Այկեղե-
ցի կ'ըսենք քարէ փայտէ շինված
տաճարներուն , ուր որ հաւա-
տացեալք կը ժողվելին՝ Մատու-
ծային պաշտամուհիքնէր կատարե-
լու համար : Այս շէնքերը կամ
տաճարները՝ յարմարական անու-
նով միայն Այկեղեցի կ'ըսվին , ու
բովհետեւ նիւթական Այկեղե-
ցին Քրիստոսի բարոյական մար-
մինէն կազմված չէ , այսինքն

Հաւատացելոց քաղմութենէն
 քաղկացած չէ, այլ քարէ՝ փայտէ՝
 ու հողէ շինված է. չէ թէ Մաւ
 քելոց և Վարդարէից սրբազան
 խօսքերուն վրայ հիմնված է,
 այլ հողի վրայ հաստատված ։
 Բայց սրբազորք պաշտամունքնե-
 րով, և սուրբ Մաւքելոց ու Վար-
 դարէից գիրքերու կարգացմունք-
 ներով, ու սրբարար միւս սնով օձ-
 վելով՝ կ'ըլլայ Տաճար Մասուձոյ,
 սրովհետեւ ոչ անկէ ետքը սրբ-
 քաղան խորհուրդներ պիտի կա-
 տարվի իր մէջը. ասոր օրինակն
 էր Սողոմոնի Տաճարը, և սուրբ
 Սիան վերնատունը ։

Մտք մէջ կը ժողովին Հաւա-
 տացեալները աղօթք ընելու՝ և
 մէյտեղ փառաբանութիւն մա-
 տուցանելու ամենակալ Մասու-
 ձոյ, սուրբ Մէտաբանին խօս-

քերք լսելու, և Վրիստոնէական
 ողջամիտ վարդապետութիւննե-
 րը մտիկ ընելու. հոս կը ժողջը-
 վին Վրիստոսասէր անձինք՝ որ
 ջերմեռանդ փափաքով տեսնան
 սուրբ անմահ Պատարագի խոր-
 հուրդին կատարումը սուրբ Աե-
 ղանին վրայ. որով քաւութիւն
 և թողութիւն կ'ըլլայ կենդա-
 նեաց և ննջեցելոց մեղքերուն:
 Աւստի բնակողներուն անուամբը
 բնակարանին կ'ըսենք Այեղեցի,
 բայց նիւթական ըսելով՝ կը որո-
 շենք Օինուորականէն ու Յաղ-
 թականէն:

Այս նիւթական Այեղեցին՝
 ուրիշ զանազան պանծալի անուն-
 ներ ալ ունի. զորօրինակ՝ կ'ըսվի
 Տուն Ատուծոյ. Յարկ սրբու-
 թեան. Տեղի փառաբանութեան.
 Բնակարան հրեշտակաց. Քաւա

բան մեղաւորաց . և սիրաժողով
խմբարան հաւատացելոյ :

Հերիք սեպենք այս ըսած
ներնիս , և լսենք հիմայ սա վը-
կայու թիւնները :

« Տուն իմ՝ տուն աղօթից կո-
չեացի (Սփ . իս . 13) : Նախ՝
յորժամ ՚ի մի վայր ժողովեցիք
Ահեղեցին . . . : Աւարդ՝ ՚ի ժո-
ղովելն ձեզ ՚ի միասին , ոչ է տուն
տեառն ձեզ տեղի հաց ուտե-
լոյ . . . : Սի թէ տունս ոչ ունի-
ցիք ուտելոյ և բմակելոյ . եթէ
դ՛հեղեցեալն Մտուծոյ արհա-
մարհէք » (Ա . Կրն . Ժա . 18) :



Գ Լ ՈՒ Խ Ե .

Քրիստոսի Եկեղեցւոյն շնորհքները :

Քրիստոսի զինուորեալ Եկեղեցին շատ կրնայ պարծիլ Մատուծմէ ձրի պարգեւած գանազան շնորհքներուն վրայ , որոնք Մատուծոյ մարգասէր բարերարութենէն միշտ կը ծաւալին Եկեղեցւոյ վրայ՝ արեւին ճառագայթներուն պէս , որովհետեւ անոնցմով կ'աճի ու կը զօրանայ Եկեղեցին՝ անսակ տեսակ առաքինական գործքերու մէջ . անոնցմով հաստատ ու անշարժ կը մընայ Մեծաբանական կոչման մէջ , ու ճշմարիտ հաւատքի մէջ . այն շնորհքներով հաղորդ կրնայ ըլլալ երկնաւոր ու գերբնական բա-

բիքնեբու, և Մատուծոյ փառքին.
 այն շնորհքնեբով կարող կրնայ ը-
 լայ մինչեւ Մատուածանմանու-
 թիւն բարձրանալու՝ Գիտնէսիոս
 Մատուածաբանին ըսածին նայե-
 լով: Աւստի կը պարտաւորի Լ-
 կեզեցին՝ Մատուծմէ ձրի ընդու-
 նած շնորհքնեբը ճանչնալու, և
 այն գերբնական ձիրքեբը պար-
 գեւորին գոհութիւն մատուցա-
 նելու, որ աննեցմով այնքան մե-
 ծացաւ ու հարստացաւ Մա-
 տուածգիտութեան և Մատուած-
 պաշտութեան մէջ՝ ամէն բանով
 կատարեալ: « Գոհանամք զՄ-
 տուծոյ իմոյ յամենայն ժամ փա-
 սըն ձեք՝ ի վերայ շնորհացն Մ-
 տուծոյ, որ տուեալ են ձեզ ի
 Վրիստոս Յիսուս. զի յամենայ-
 նի մեծացարուք դուք նովաւ՝ ա-
 մենայն բանիւ և ամենայն գի-

տու թեամբ » (Ա. Կրն. ա. 4) :

Այս Ատուածապարգեւ շնորհքը՝ կը նորոգէ մարդու հագին, կը լուսաւորէ միտքը, կը հալածէ մեղքը, ու կը մաքրէ խղճմտանքը, կը յայտնէ այս աշխարհիս ունայն և անցաւոր բլլալը, ու հիմակվնէ կը ցուցունէ յաւիտենական փառքը. աւտնցմով կ'ուժոյնան ու սիրտ կ'առնեն առաքինի մարդիկ՝ չի հոգնելով եւս առաւել առաջ երթալու բարձր առաքինութիւններու մէջ. և այս շնորհքներուն մէջ՝ մտօք լուսաւորվելով, բոլորովին կը մերժեն ամէն մտորութիւնները, ու արդարութեան ճամբուն կը հետեւին : Ասով Սողոսը՝ Պօղոս բալեցաւ, ու Քրիստոսի Եկեղեցւոյ հալածիչը՝ կենաց բանին քարոզիչը ե-

դաւ . ասով մաքսաւորները ու
 մեղաւորները աշխարհիս ցանկու-
 թիւնները ու փափաքները ձգե-
 ցին , ու իրենց խաչք առնելով
 Քրիստոսի ետեւէն գացին . մար-
 տիրոսները ասով զօրացան իրենց
 արիւնը թափելու . ճշմարտու-
 թիւն դաւանող բոլոր սուրբե-
 րուն անուանները՝ այս շնորհքով կը
 գրվին երկինքը՝ կենաց դպրու-
 թեան մէջ : Այս պարգեւները
 Աստուծոյ բարերար մարդասիրու-
 թենէն ըլլալուն վրայ՝ լսէ այս վը-
 կայու թիւնները : « Օ՛ի շնորհօք
 նորա էք փրկեալք ՚ի ձեռն հաւա-
 տոց . և այս սո՛չ ՚ի ձէնջ՝ ոյլ Աստու-
 ծոյ պարգեւ է , սո՛չ ՚ի գործոց՝ զի
 մի ոք պարծեսցի (Ա՛րհ . բ . 8) :
 Այլ յորժամ կամեցաւ Աստ-
 ուած , որոչեաց զիս յորովայնէ
 մօր իմոյ , և կոչեաց ՚ի ձեռն չը-

նորհաց իւրոց ր (Պատմ. ա. 15):

Աստի Պեղադեանք ու կիւ
սապեղադեանք ըսված մուտրեալ
ներք՝ պարսպ տեղք կը ջանային
իրենց ծուռ կարծիքը հաստատե-
լու, թէ մարդս չէ թէ շնորհօք,
այլ լոկ բնական կարողութեամբ
կրնայ ճշմարիտ հաւատարմ
բնոյ աւ-
նել, ու Աստուած պաշտու թեան
հեռուիլ, ու բարի գործքերու
մէջ առաջ երթալ, բայց Ակեղե-
ցւոյ սրբազան վարդապետները՝
ասանց դեմը ելլելով Աւետարա-
նական ճշմարտութեան զօրաւոր
խօսքերով, սրապանձեցուցին ա-
նոնց բերանները, և այն ծուռ
վարդապետութեան մուտրու-
թիւնները մերժեցին, ու Քրիս-
տոսի Ակեղեցիէն դուրս հանե-
ցին՝ հաստատ ցուցունելով, թէ՛
կարող չէ մարդ առանց Աստու-

ծոյ շնորհացը՝ ինքն իրեն իր խել
 քալը խորհիլ Աստուածային ու
 բարի վախճան ունեցող բան մը .
 և այս ճշմարտութիւնը աւետա-
 րանական և առաքելական վար-
 դապետութիւններու ապացոյց
 հաստատեցին . որոնցմէ մէկ քանին
 հոս կը յիշենք : « Առանց իմ ոչինչ
 կարէք առնել (ԶՊ . Ժե . 5) :
 Իբրեւ ոչ եթէ անձամբ բաւա-
 կան եմք խորհել ինչ իբրեւ ՚ի
 մէնջ , այլ բաւականութիւն մեր
 յԱստուծոյ է (Բ . Կրն . Գ . 5) :
 Լըրանի քեզ Սիմոն որդի Զօնա-
 նու , զի մարմին և արիւն ոչ
 յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ որ
 յերկինս է » (Մատ . ԺԳ . 17) :



Գ Լ ՈՒ Խ Թ . Գ .

Ի՞նչ է շնորհքը :

Շնորհքը՝ համառ օտապէս աւսանկ կը սահմանվի Աստուածաբաններէն :

« Շնորհքը՝ Աստուծոյ գերբնական պարգեւն է , որ իբր բանական ստեղծուածներուն ձրի տրված է՝ Քրիստոսի արդիւնքներով յաւիտենական վերկուլթեան հասնելու համար » :

« Գերբնական » ըսվելով՝ կը որոշվի Աստուծոյ բնական պարգեւներէն . ինչպէս են բոլոր բնական և զգալի բարիքները , ուրոնք արտաքին վայելուլթեան համար իբրեւ պարգեւ՝ շնորհեց բանական ստեղծուածներուն՝

որ վայելեն իրենց կենաց պիտո-
յից և զուարճութեանը համար,
և փառք տան այն ամէն բաները
ստեղծող արարչին :

Ասոր պէս են մեր վրայ ունե-
ցած խնամքները՝ պահպանու-
թիւնը, և հոգիներնուս ու մար-
միններուս տեսակ տեսակ բնա-
կան ձիրքերը, որովհետեւ միտ-
քն ու կամքը մեր հոգւոյն կա-
րողութիւններն են Աստուծմէ
պարգեւած, որ անոնցմով հոգի-
նիս կ'իմանայ, կը մտածէ, կը
ճանչնայ, կը յիշէ, կը կամի, ու
կը գործէ, և ասոնցմէ գերազանց
ձիրք՝ հոգիին անմահութիւնն է:
Վմանապէս մտքնոյ վրայ ալ կ'ե-
րեւի յատուկ ձիրքեր, որ է շե-
տակ կանգնած վայելուչ հասակը,
զգայարանքներուն գեղեցիկ յաջ-
մարութեամբ տեղն ՚ի տեղը դրը

վածքը, որոնցմով ամէն կենդանի
նիներէն աւելի աղւոր կ'երեւ-
ւայ :

Ասոնց կարգն են ուրիշ ամէն
բնական բարիքներն ալ, որ կը
վայելէմք Աստուծոյ խնամքով,
որոնք տիրապէս կ'ըսվին շնորհք,
կամ Աստուծոյ ձրի սպարդեւներ,
որովհետեւ չար ու բարի մար-
դիկ միօրինակ կը վայելեն ան-
խըտիր :

Իսկ Աստուածաբաններուն
գերբնական շնորհք ըսածը՝ Աստ-
ուածային այն ձրի և առատ սպար-
դեւներն են, որոնք բնական կար-
գէ վեր են :

« Չրի տրված » ըսվելով յայտ-
նի կ'ըլլայ, թէ ինչպէս որ Ա-
բարչին խնամքով ձրի սպարդեւե-
ցաւ մարդուս՝ իր բանական բը-
նու թիւնը, ըստ այնմ, « Աս ա-

բար զմեզ՝ և ոչ մեք էաք » (ՍՂ
 զԹ . 3) , անանկ այլ շնորհքք
 միշտ ձրի կը արսլի մեզի իր բարե-
 բարութենէն , ու չէ թէ մեք
 փաստա՛ն է :

« Բանական ստեղծութեան
 բուն » ըսելով՝ յայտնի կ'ըլլայ ,
 որ ամէն էակ ընդունակ չեն այս
 շնորհքին , այլ միայն բանական
 ներք , որոնք անմահ հոգի ունին ,
 և մտքով ու կամքով ճոխ ու զար-
 դարված են , որով կրնան շնորհաց
 գերագոյն յարգը ճանչնալ ու
 ընտրել , և փափաքով անոր փաթ-
 թըմիլ , և մեծարանքով սահել
 անիկայ , հաստատ գիանալով ,
 թէ՛ իրենց երանաւէտ վախճա-
 նին հասցընող մէկ հատիկ ստու-
 ճառն է շնորհքք , և մինչեւ եր-
 կինքք բարձրացած յաւիտենա-
 կան կենաց սանդուղն է , որ ա-

նով կը հասնելի երկնից արքայու-
թեան փառքին , այն պատճա-
ռաւ ըսվեցաւ՝ « Յաւիտե՛նական
փրկութեան հասնելու համար » :

Այս բոլոր սահմանը՝ միայն
գերբնական շնորհքին կը վերա-
բերի , որ կ'առաջնորդէ գէտ 'ի
յաւիտե՛նական փառքը : Ասոր կը
վայլէ այս վկայութիւններուն
ճշմարտութիւնը . « Օ՛ր արդա-
բացեալք շնորհօքն՝ եղիցուք ժա-
ռանդաւորք յուսով կենացն յա-
ւիտե՛նականաց (Տէր . գ . 7) :
Եւ Աստուած ամենայն շնորհաց՝
որ կոչեաց զձեզ յիւր յաւիտե-
նական փառսն՝ Յիսուսիւ Քրիս-
տոսիւ » (Պէր . Ա . կաթ . ե . 10) :

Աւստի՛ այս գերբնական շն-
որհաց ձրի պարգեւներուն ըն-
դունակ է Նկեղեցին՝ Քրիստոսի
ճարգեղութեան հզօր արդիւնք-

ներով, անոր համար սահմանին մէջ՝ «Քրիստոսի արդիւնքներով» ըստեցաւ. որովհետեւ Քրիստոս՝ Ալկեղեցին բացարձակ և ընդհանուր գլուխն է, և Ալկեղեցին՝ անոր բարոյական մարմինն է, ուրեմն հանրական շնորհքները տիրապէս կը հասէ իբրեւ գլուխ իր անդամներուն. անոր համար Ալկեղեցին՝ կամ հաւատացելոց ժողովը՝ սրբաւար է ճանշնալու, թէ շնորհքը՝ մեր կենարար Յիսուսի հրաշաղարդ մարդեղութեան պատուին է, ու ինքն է շնորհաց առաջին պատճառը, և մեր փառաց տէրը :

«Ի լուծենէ անտի նորա մէք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց . . . : Շնորհք և ճշմարտութիւն ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն (Յօհ. :

ա . 16) :

Օ ի 'ի նմա բնակէ ամենայն
լրումն Աստուածութեան մարմ-
նապէս . և էք դուք նովաւ լը-
ցեալք ; որ է գլուխ ամենայն իշ-
խանութեան և պետութեան .
(ԱՊՂՄ . Բ . 9) :



Գ Լ ՈՒ Խ Լ :

Քանի՜ տեսակ է շնորհքը :

Երկու տեսակ շնորհք կայ .
արտաքին , և ներքին :

Արտաքին շնորհքը՝ Աստուծոյ
ձրի գթութեան և գերբնական
նախասնամութեան զարմանալի
ներգործութիւնն է . և այս շնորհքը
ուներցողներուն վրայ
բարոյապէս կ'երեւայ դուրսէն
անոր արգիւնքը . որոնք կը նմանին՝
վեղուկ ջուրի քով անկրկած ու
արմատ կապած ծառի մը , որ ժա-
մանակին՝ պտուղներով զարդար-
ված գեղեցիկ և վայելուչ կը տես-
նըվի . ինչպէս ե՛ն անոնք՝ որ կարի-
ճութեամբ կը համբերեն շատ
տեսակ մեծ մեծ նեղութիւննե .

բու՛ Վարձու թիւններու՛ և հաւ
լածանքներու , կամ՛ թէ՛ անոնք՛
որ կ'օգնեն և կ'ողորմին անօգ-
նական կարօտեալներուն , կամ
թէ՛ անոնք՛ որ անտանելի չըքա-
ւորու թեան մէջ տագոհանք չը-
նելով միշտ գոհանան՝ իբր թէ՛
առատ բարիքներով լեցված են :

Այանկ արտաքին շնորհաց ար-
գիւնքներ և առաքինու թիւններ՛
գործքով ցուցուց Վահէդոնաց-
ւոց Ալեկզեցին՝ այսինքն Վահէ-
դոնիայի մէջ եղած Վրիտանեա-
ները՝ որոնց բարեպաշտական
գործքերը սրբազան առաքեալն
Պօղոս գովելով կը հրատարակե-
ութիւններուն , և սրտաճառք գոր-
ծին տեղը առնելով՝ շնորհք կ'ան-
ուանէ անոնց առաքինու թիւն-
ները :

“ Տուցանեմ ձեզ եղբարք՛

զնորհան Մատուծոյ, որ տուեալ
 են Նկեղեցեացն Վահեդ ունաց-
 ւոց, զի մեծաւ հանդիսիւ նե-
 ղու թեան՝ առաւելու թիւն խըն-
 դու թեան նոցա, և ծանր աղ-
 քատու թիւն նոցա՝ առաւել ե-
 ղեւ ՚ի մեծու թիւն առատու-
 թեան նոցա ։ (Բ. Կրն. Ը. 1) ։

Մեր կենարար Յիսուսին
 մարդեղու թեամբը Մատուծոյ ըս-
 քանչեւ ի մարդասիրու թեան ար-
 տաքին շնորհքը յայանի եղաւ
 մարդկային սեռին. ճշմարիտ է
 որ՝ մեծ շնորհաբաշխու թիւն ե-
 ղաւ՝ բոլոր աշխարհիս աչքին
 առջեւ՝ սուրբ կոյսէն ճնանելու
 վը, որդի մարդոյ ըսվելովը, աշ-
 խարհի մեղքերը վերցընող դառն
 Մատուծոյ կոչվելովը, սքանչելի
 հրաշագործու թիւններովը, կեն-
 սատու վարդապետու թիւններու

վը , կամաւոր չարչարանքներովը ,
մեզ փրկելու համար խաչվելովը ,
իր կարող զօրութեամբ յարու-
թիւնն առնելովը , և մեժ փառ-
քով՝ ինքնիշխան՝ երկինքը համ-
բառնալովը :

Անր փրկիչ Յիսուսին այս
արտաքին առատ շնորհաբաշխու-
թիւններէն՝ յաջողեցաւ մեզի ալ
մահէն կեանքի փոխովիլ , դատա-
ւարտութեան վիճակէն՝ փրկու-
թեան վիճակը անցնիլ , մեզաց
անարգութեանէն՝ Աստուածային
փառքը ժառանգել : Այս ճրչ-
մարտութիւնը յայտնի կը ցու-
ցունեն հետեւեալ վկայու-
թիւնները :

“ Ալ բանն մարմին եղեւ՝ և
բնակեցաւ ՚ի մեզ , և տեսաք ըզ
փառսնորա զփառս իբրեւ զմիած-
նի առ ՚ի հօրէ՝ լի շնորհօք և ճրչ-

մարտութեամբ (Յօհ . ա . 14) :

Քանզի երեւեցաւ շնորհն
 Աստուծոյ Փրկիչ ամենայն մարդ-
 կան » (Տիգրան . բ . 11) :

Ներքին շնորհքը՝ Աստուա-
 ծային այն գերբնական պարգեւն
 է , որ մարդուս ներսիղիէն կը
 շարժէ ու կը զօրացնէ կամքը և
 յօժարութիւնները , որով անկէ
 ետքը ըրած գործքերը արդարու-
 թեամբ և ուղղութեամբ կը
 գործէ , և իր բարի դիտաւորու-
 թիւններուն արգելքները կը խա-
 փանի կը վերնայ , և ահա՛ այսպի-
 սի շնորհքով կարող կ'ըլլայ ամէն
 մարդ հողւոյն փրկութիւնը և
 երկնից փառքը ձեռք անցու-
 նելու :

Այս անյաղթելի զօրութիւնը՝
 Հողւոյն սրբոյ պարգեւն էր , որ
 Յիսուս իր առաքեալներուն կը

խոստանար՝ երկինքէն անոնց շնորհ
հել, որ զօրանան և անյաղթելի
մնան ամէն տեսակ հակառակու
թիւններու և թշնամիներու
դէմ:

« Եւ ահա՛ ես առարկեմ զա
ւետիս Հօր իմոյ ՚ի ձեզ, և դուք
նստարձուք Աշրուսաղէմ մինչեւ
զգենուցուք զզօրութիւն ՚ի բար
ձանց (ՂԳ՝ Գ՝ ԻԴ . 45) :

Յամենայնի կարող եմ, այնու՝
որ զօրացոյցն զես » (Փիլիպ . Դ .
13) :

Գ Լ ՈՒ Խ Բ

Քանի տեսակ է ներքին շնորհքը :

Ներքին շնորհքը չորս տեսակ է . ներդորձական , սրբարար , ձըրիատուր , դորձադիր :

« Ներդորձական » շնորհքն է մէկ գերբնական լոյս մը , որ Մտուծոյ անսահման բարութեանէն կը ծագի , ու կը ներդորձէ հոգիներուն . այս շնորհքն է որ գերբնականապէս կը լուսաւորէ ընդունողներուն միտքը , ու կը շարժէ ճշմարտութիւնը ճանչնալու . որով մարդս ստատիկ յօժարութեամբ կը վառի Մտուածաբանական առաքինութիւններու մէջ՝ որք ե՛ն հաւատք՝ յոյս՝

և սէր . այսինքն Վրիստոնէական
 ուղղափառ հաւատքին մէջ կը
 հաստատուի , խոստացված երկ-
 նաւոր բարութիւններու վրայ
 անկասկած յոյս կ'ունենայ ,
 զԱստուած՝ ու իր ընկերը կա-
 տարեալ սիրով կը սիրէ , զԱս-
 տուած կը սիրէ՝ որ գերագոյն բա-
 րին է , ու ընկերը կը սիրէ՝ որ
 Աստուծոյ պատկերակիցն է :

Այս ներգործական շնորհքով
 միտքը կը բացուի ամէն գերբնա-
 կան ուսմունքները դիւրաւ սոր-
 վելու . ասով՝ կամքը ինքիրեն կը
 յօժարի Աստուծոյ անժխտելի
 հրամանները սիրով կատարելու .
 և ահա այս ըսածներս կը հաս-
 տատուի այս վկայութիւններով :

« Վրեալ է ՚ի մարգարէս , և
 եղիցին ամենեքեան ուսեալք
 Աստուծոյ , ամենայն որ լսէ ՚ի

Հօրէ և ուսանի , գայ առ իս
 (Յօհ . զ . 45) : Իսկ միտիթարիչն
 Հոգին սուրբ , զոր առաքեցէ
 Հայր յանուն իմ , նա ուսուցէ
 ձեզ զամենայն . և յիշեցուցէ
 զամենայն՝ զոր ինչ ասացի ձեզ
 (Յօհ . ժդ . 26) : Կին ոմն անուն
 Կիզիա ծիրանաթաճառ՝ ՚ի թիւ
 ւատիր քաղաքէ՝ երկիւղած յԱս
 տուծոյ՝ լուաւ . զորոյ տէր իսկ
 եբայ զսիրտ անտալ խօսիցն Պօ
 ղոսի ո՛ր (Ղործ . ժզ . 14) :

“ Սրբարար ո՛ր Հնորհքն է մեկ
 գերբնական ընդունակութիւն
 մը , որ կը տարածի ու կը ծաւա
 լի հաւատացեալներուն հոգւոյն
 մէջ . և կը սրբացընէ զանոնք , ու
 բոնք որ կը մերձենան ասրաշխա
 բութեան սրբարար և արդա
 բացուցիչ խորհուրդին , և կը
 հաղորդին կենարար մարմնոյ և

արեան (Յիսուսի . որով այս մեր
 հողեղէն բնութիւնը կը հաղորդ
 դի Աստուածեղէն անեղ և ամե-
 նակատար բնութեանը հետ :
 Այս սրբարար շնորհքը Աստու-
 ծոյ բարերար մարդասիրութենէն
 մեր հողւոյն մէջ տպաւորվելով՝
 մեզ յաւիտենական երանու-
 թեան ժառանգ կ'ընէ , և մեր
 Տէր Յիսուս Քրիստոսին ժա-
 ռանգակից կ'ընէ . ինչպէս որ այս
 վկայութիւնները կը ցուցունեն .
 « Հայր՝ զորս ետուրն ինձ , կա-
 միմ՝ զի ուր եսն եմ , և նորա ի-
 ցեն ընդիս , զի տեսանիցեն ըզ-
 րիառս իմ զոր ետուրն ցիս (Յճ .
 Ժէ . 24) : Իսկ եթէ ընդ լոյս
 գնացեմք՝ որպէս և նա ՚ի լոյս է ,
 հաղորդութիւն ունիմք ընդ մի-
 մեանս . և արիւնն (Յիսուսի որդ-
 ւոյ նորա սրբէ զմեզ յամենայն

մեզանց (Յօհ. Ա. Կաթող. ա. 7.) :
 Ար փրկեացն զմեզ, և կոչեաց
 զմեզ ՚ի կոչումն սուրբ. ոչ ըստ
 գործոց մերոց՝ այլ ըստ իւրում
 յառաջագրութեանն և շնորհաց՝
 որ տուաւ մեզ ՚ի Քրիստոս Յի-
 սուս յառաջ քան զժամանակն
 յաւիտենից » (Բ. Տիմոթ. ա. 9) :

« Չրիատուր » շնորհքն է՝
 Լստուծմէ արված գերբնական
 սրբգեւ մը՝ անով ուրիշներուն
 փրկութիւնը հոգալու համար .
 ուստի այս ձրիատուր շնորհքը
 ով որ կ'ըստանայ, անոր ձեռքով
 շատ հոգեւոր օգուաներ յառաջ
 կուգան . շատ մարդոց բարեգոր-
 ծութեան ու առաքինութեան
 պատճառ կ'ըլլայ, մանաւանդ
 անանկներուն՝ որ շնորհալարդ-
 մարդոց ողջամիտ վարդապետու-
 թեանը և բարոյական խրատնե-

բուն ահանջ կը գնեն ու կը հե-
տեւին :

Այս սարգեւներուն շատը՝
Առաքեալներուն , և առաքելա-
չնորհ Վարդապետներուն , և
Աստուածային սուրբ մարդոց , և
հոգեւոր Հովիւներուն և բարե-
ջան Սուսցիչներուն շնորհե-
ցաւ : Այս ձրիատուր շնորհքը
կերպ կերպ կը բաժնրվի՝ գործա-
ծողներուն կերպ կերպ պաշտօ-
նին նայելով , ինչպէս որ մեծ
ճառ մը՝ որ շատ ճիւղեր ունի .
նայէ ինչ կ'ըսէ սրբազան Առա-
քեալը : « Թէպէտ և բաժինք
շնորհաց են , այլ Հոգի նոյն է ,
եթէ բաժինք պաշտամանց են ,
այլ Տէր նոյն է , եթէ բաժինք
յաջողութեանց են , այլ Աստ-
ուած նոյն է , որ յաջողէ զամե-
նայն յամենայնի . բայց իւրա-

քանչիւր ու մէք տուեալ է յայտնուածիւն շողայն՝ առ իւրաքանչիւր օգուտոյ. և այլն (Ը. կրթն. ժբ. 4) :

Սի և նոյն շողին սուրբէն կուգայ այս բազմատեսակ ձրիապարգեւ շնորհքք, բայց հասարակաց օգտին համար՝ և Այկեղեցւոյ պայծառութեանը համար՝ բնդունողնեքուն արժանաւորութեանը ու կարողութեանը շարժար կերպով կր արվի. անոր համար՝ այս շնորհքները սրննոյ որ կը յանձնելի, սկտք է որ՝ հաւատարիմ դանձապետներու սկս՝ և Մատուծոյ զանազան շնորհքներուն պաշտօնեաց եղածի սկս՝ մասակարարեն Մատուծոյ փառքին համար և բնկերին օգտին համար. որովհետեւ պարգեւողին ալ մարդասէր կամքը ան է :

Եւ ահա՛ սրբազան Առաքեալն Պետրոս ալ յայանի կերպով կը յորդորէ ամէն շնորհընկալները՝ որ իրենց յանձնըված այն շնորհաց մատակարարու թիւնը չի խնայեն իրենց եղբայրներէն, այլ աննախանձ նու իրեն կարօտեալներուն, ինչպէս որ եղբայրս իրութեան ու մարդասիրութեան ուղիղ կանոնը կը պահանջէ : « Իւրաքանչիւր որ որպէս և ընկալաւ շնորհքս ինչ, զնայն մատակարարել իբրեւ զբարւոր հազարապետս պէս պէս շնորհացն Աստուծոյ » (Պէտ. Ա. Կաթ. . դ . 10) :

« Գործադիր » շնորհքը կ'օգնէ ու կը զօրացընէ մեր տկար ու աշխարհասէր բնութիւնը, որ յօժարութեամբ՝ բարին սիրենք, ու չարութիւնը ատենք, ասիկայ՝ հաճոյարար շնորհք ալ

կ'ըսալի . որովհետեւ ընդունողին
կամքը գէտ 'ի բարին կը շարժէ ,
ու վարքը շտկել կուտայ , և
Մտուածահաճոյ կ'ընէ զանիկայ :
Մտիկայ՝ Մտուծոյ ուղած բանե-
րը խորհել կուտայ մտքին , ու
կ'արտորցընէ սէս սէս առաքի-
նութիւններու մէջ առաջ եր-
թալու , և անոնց յարգը գործ-
քով յայտնելու : Մտիկայ՝ մեղաց
թոյնին գեղթափն է , ասիկայ՝
մեծ փող մըն է , որ խղճմտանքը
կ'արթընցընէ՝ բարին ու չարը ու-
րոշելու համար՝ ճշմարտութիւնն
ու ստութիւնը մէկզմէկէ տար-
բերելու համար . ասիկայ է՝ որ
ընդունողը ճշմարտասէր և բա-
րեգործ կ'ընէ , ասով՝ հոգին ա-
մէն տեսակ առաքինութիւննե-
րով ու բարոյական փարթամու-
թիւններով կը հարուստնայ : « Աջ

կարէ մարդ առնել յանձնէ և
 ոչինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա
 յերկնից ՚ի վերուստ (Յովհ. 4. 27):
 Օ, ի որք մարմնովն են, Աստու-
 ծոյ հաճոյ լինել ոչ կարեն. բայց
 դուք ոչ էք մարմնով՝ այլ հոգ-
 ւով, եթէ իցէ Հոգին Աստու-
 ծոյ ՚ի ձեզ բնակեալ » (Հովհ. 14.
 2. 8):

Այլ երկինքը՝ կրնաս համբել
 բոլոր աստղերը. նմանապէս ան-
 հրնար է համբանքի բերել Աս-
 տուծոյ շնորհքներուն անբաւ-
 տեսակները. ուստի ահա Աստու-
 ծոյ այս բաղմատեսակ շնորհք-
 ներով կարով կ'ըլլանք բարեգործ
 ըլլալու, և յաւիտենական կե-
 նաց ու փառաց հասնելու:

Գ Լ ՈՒ Խ Թ .

Աստուծոյ շնորհքները ընդունելու
չանք և հոգ ընել պէտք է :

Ամենաբարի ու մարդասէրն
Աստուած կ'ուզէ որ՝ ամէն մարդ-
ապրի յաւիտենական կենաց հա-
մար , ու ճշմարտութիւնը ճանչ-
նալու մէջ հաստատ մնայ , ու ի-
րեն փառացը հաղորդ և ժա-
ռանդ ըլլայ . ուստի մէկէ մը չի
խնայեր իր շնորհքները , ու բը-
նաւ ետ չի մնար զանոնք սար-
գեւելէն : Իայց մարդիկ շատ
անգամ կը զրկուին այն Աստուա-
ծային ձրի շնորհքներէն՝ իրենց
անհոգութեամբը , և չար կամքո-
վը , որ Աստուծոյ այնչափ առա-
տաձեռնութեանը հակառակ է :

Արեւին գործն է՝ ամէնը լուսաւորել . բայց ան որ կը գոցէ պատուհանները անոր լուսին գէմ, ՚ի հարկէ կը զրկուի անոր աշխարհածաւալ ճառագայթներէն :

Ասանկ ալ թէ որ մեր ընթացքը ծռած ու մոլար է, և մեր վարքը գէշ է նէ, Աստուծոյ զանազան շնորհքներէն կը զրկուիմք :

Աստուած՝ անհուն շնորհքներու աղբիւր մըն է . և կարօտները իրեն կը կանչէ՝ ըսելով, « Այժմէ որք ծարաւի իցէ, եկեացէ առիս և արբցէ » (Զօհ. է. 37) :

Արեմն պէտք է մեզի՝ առանց ծուլութեան այն շնորհք բղխող աղբիւրին երթալ, և մեր փրկիչութեան հարկաւոր եզող այն ձրիական սարգեւը ընդունել անկէ :

Աշխարհասիրութիւնսով ու
 երկրաւոր ցանկութիւններով
 լցված սիրտը՝ Աստուածային շը-
 նորհաց ընդունակ չէ, ինչպէս
 որ լեցուն ամանի մը մէջ՝ ուրիշ
 մաքուր ու սրատուական խմելիք
 մըն ալ չի լեցվիր: Աստի թա-
 փէ սրտիդ ամանէն աշխարհա-
 սիրութեան փուճ ցանկութիւն-
 ները, որ աեզը շնորհքներ լեցը-
 նես, և ըլլա՛ սիրտդ մաքուր ա-
 նօթ մը, և երկնաւոր բարիքնե-
 րու աման մը: Աստուծոյ ծայ-
 րագոյն բարութիւնը յօժար է
 ու սատրաստ է՝ մեզի մեր հար-
 կաւոր բարիքները առատ առատ
 սարգեւելու, ու արտաքին և
 ներքին սարգեւելնելով մեզ լե-
 ցընելու. բայց մեզնէ այս կ'ու-
 ղէ որ՝ կամքերնիս բարիին հե-
 տեւեցընեմք, աշխարհիս փուճ

զուարճու թիւնները մէկդի ձը-
 գեմք , մտքերնուս մէջէն չար
 խորհուրդները հեռացրնեմք . և
 այս բաները՝ չէ թէ իրմէն բըռ-
 նադատուելով ընեմք , այլ մեր
 անձնիշխան և ազատ յօժարու-
 թեամբը ընեմք : Արովհետեւ՝
 ինչպէս որ Աիրաք կ'ըսէ՝ (ժէ ,
 6) . Աստուած՝ որ մեզ ստեղծեց ,
 խելքով մտքով զարդարեց մեր
 հոգին ու մեր սիրտը՝ ու մեր անձ-
 նիշխանութեանը յանձնեց , որ
 ազատ կամքով ընտրենք բարին՝
 ու չարը , լոյսը՝ ու խաւարը ,
 և այլն :

Աւր թողումք բնական օրէն-
 քն ալ , որ քու սրտիդ յօժա-
 րութեամբը ու մտքիդ փկայու-
 թեամբը ներսի դիէդ կ'իմացրնէ
 կը սորվեցրնէ քեզի՝ ազէկը գէ-
 շէն զատելը , ու փրկութեան շի-

տակ ճամբան՝ կորստեան ծուռ
 ճամբայէն որոշելը, ու կը խորա-
 տէ քեզ որ ինչ որ դուն չես ու-
 ղեր, [Թէ՛ ընեն քեզի ուրիշները,
 դուն ալ մ'ըներ ան բաները ու-
 րիշներուն ։

Արտիճեալեւ կը ճանչնաս քու
 պատիւդ ու քու անարգանքդ,
 ու չես ուղեր անարգվիլ, այլ
 պատիւդ կը փնտրուես, անանկ
 է նէ կրնաս ընտրել բարին ու
 չարը, բարին սիրել՝ ու չարը չք-
 սիրել, մտլու [Թիւններէ հեռու-
 նալ՝ ու առաքինու [Թիւններու
 փաթ [Թըլիլ։ և ասանկով պատ-
 բաստըլած կ'ըլլաս Աստուածա-
 յին ձրիապարգեւ շնորհքները
 ընդունելու ։ Աս բսածներէս
 կ'ուղեմ հասկըցընել, [Թէ՛ ամե-
 նաբարին Աստուած կ'ուղէ որ՝
 իր երկնաձիր շնորհքները առատ

առատ պարզեւէ քեզի , բայց կը նայի որ՝ դուն ալ քու ազատ կամքովդ հետեւիս իր մարդասէր ու բարեբար կամքին : Յարմար ու գեղեցիկ օրինակով մը աս բանին կը յորդորէ մեզ՝ Ասայեայ մարդարէութեան մեկնիչ շնորհասակը՝ Վեորդ վարդապետան մեր՝ ըսելով թէ՝ « Օրօրինակ չէ հնար լուսոյ լուսաւորել զաչս , եթէ ոչ նախ աչքն առողջ իցեն , նոյնպէս և Աստուծոյ խնամքն ոչ ճանաչի մեզ , եթէ ոչ միտքն ՚ի ներքս առողջ իցեն մեզ » : (՚ի մեկնութեան անդ) :

Աւրեմն չըլլայ որ՝ անմտութեամբ աշխարհային բաներու ետեւէն իցնաս , և փուճ սլառ ճառներով առաքինական գործքերէ ետ մնաս : Անչցիր անցաւորը , ճանչցիր յաւիտենականը ,

հոգ տար ու ջանք ըրէ հոգւոյդ
 փրկութեանը համար, եւտ քաշ-
 վէ աս սուտ աշխարհիս փուճ
 զուարճութիւններէն: Օ, զուէ՛
 մարմնաւոր գէշ ցանկութիւննե-
 րէն, ու սկըսէ՛ զմայլիլ հոգեւոր
 մտածմունքներով, ան ատենը կը
 տեսնաս թէ՛ կենաց առատարու-
 ղը իս աղբիւրէն շնորհաց հոսանք-
 ները ի՛նչպէս պիտի լեցվին հոգ-
 ւոյդ մէջ. և անով որչափ առա-
 քինութիւններու ճիւղեր պիտի
 բուսնին ներսիդ իդ, որ անմահ
 կենդանութեան հոգեւոր սը-
 տուղներ բերեն քեզի:

Համարձակէ՛ ապաւինէ՛ բա-
 րեւորութեանդ ու առաքինա-
 սէր յօժարութեանդ, ու մի երկ-
 բայիր փրկութեան և երանու-
 թեան շնորհքները Վստուծոյ ան-
 սահման մեծութենէն ստանա-

լուգ ։ Օգուշ եղիք, որ Աստու-
ծոյ առատաձեռն բարերարու-
թիւններէն ետ չի մնաս ։ զգու-
շացիր՝ որ անհոգութեամբդ ու
կամապաշտութեամբդ չի արդի-
լես չի վնասես քե՛նէ այն երկ-
նային անհատնում հոգեշահ
գանձերը ափ ձգելը ։ գրէ՛ մըտ
քիդ մէջ այս Աստուածաբանա-
կան առակը, թէ՛ « Ար յոչէից
արար դքեզ՝ առանց քեզ, ո՛չ փր-
կեսցէ արդ և դքեզ՝ առանց քեզ » ։

Այս երկնային ձրի տարդու-
կը վաստըկի մարդ՝ թէ որ այն շը-
նորհքներուն հետեւող բարի
կամք մը ունի նէ ։

Այս մեր ըսածները յայտնի
կ'երեւան սուրբ գրքին սա օրի-
նակներէն ։

Աստուած՝ Աոյ նահապետը
իր ընտանիքովը ասորեցընել ու-

ղեց ջրհեղեղէն , բայց կը հրամայէ անոր՝ որ աշխատի այն մեծագործ տապանը իր ձեռօքը շինելու՝ իր ազատութեանը համար (Օ՛ննդ . զ . 14) :

Ա՛ռ զէ՛ Ա՛յեւմանը բժշկել իր բորտութենէն՝ Ա՛ղիսէ մարգարէին ձեռքովը , բայց հրաման կ'ընէ , որ ինքն ալ երթայ լուացիլ Յորդանան գետը եօթն անգամ (Դ . թ՛ագ . ե . 10) :

Ա՛մենամիրկիչն Յիսուս՝ իր մարդասէր ու բարերար կամքովը յօժարեցաւ 'ի ծնէ կուրին աչքը բանալու , բայց կը հրամայէ որ՝ կոյրն ալ իր աչքերուն բացվելուն համար հոգնի ու երթայ լուանայ աչքերը Սելովմ ըսլաճ աւաղանը (Յ՛վէ . թ . 7) :

Ա՛ստուածային շնորհքներուն փառաբողները՝ սէտք է որ գիտ-

նան ու սովորին, թէ ինչպէս
կամ որ կերպով կրնան հետեւիլ
այն շնորհքներուն, և հարկ է որ՝
ապահով ըլլան, թէ արժանի և
ընդունակ են իրենք այն երկնա-
ձիր պարգևներուն, անոր հա-
մար իրենց վրայ հաստատ սովո-
րութիւն ընելու են այս Աստ-
ուածահաճոյ կրթութիւնները,
այսինքն բոլոր սրտով՝ և բոլոր
մտքով զԱստուած սիրել, և իրեն
պատուիրանքները պահել (ՅՊՀ .
Ժդ . 23) :

Վմանապէս՝ ճշմարիտ եղբայր-
սիրութեամբ աննախանձաբար
աշխատիլ եղբօրը և ընկերին շա-
հին համար (ՅՊՀ . Ժե . 17) :

Հողեսէր ըլլալ, և չի հաճիլ
այս աշխարհիս անցաւոր ու փուճ
ցանկութիւններուն, ապաշխա-
րութեամբ յաղթել մեղաց բըռ-

նութիւնները , խոնարհ սրտով
 և բարեպաշտ դիտաւորութեամբ
 ցանկալ ու փափաքիւ Աստուա-
 ծային շնորհքներուն ու փառքին ,
 և անոնց վրայ մտմտալ միշտ և
 հանապազ (Հոգ. Բ . 17) :

Աւրեմն պէտք է արթուն մըտ-
 քով այս առաքինութիւններուն
 մէջը հաստատուիլ անշարժ , ան-
 յադ փափաքով ասանց սրբութիւն ,
 ու ասանց սիրովը վառ վիլ սրտանց .
 և ահա այս ընթացքով՝ կ'ըլլայ
 մարդս՝ շնորհաց ընդունակ , և
 ընդունակ ըլլալովը՝ կը լցիլի երկ-
 նահոսան բարիքներով ու ձրի
 պարգեւներով , և լցիլեւովը՝ կա-
 րող կ'ըլլայ զարմանալի առաքի-
 նութիւններ գործելու , և այն
 առաքինական մեծամեծ գործքե-
 րով՝ կ'ըլլայ այս աշխարհիս մէջ
 երեւելի ու երջանիկ , և ասանկ

երջանիկ կեանքով մը՝ կը փառա-
 ւորի հոգին՝ փրկութեան վիճա-
 կին մէջ գտնուելուն համար ,
 ու խղճմտանքի խայթոցէն ազատ
 մնալուն պատճառաւ , և այն
 փրկութեան վիճակաւը՝ մեռնել-
 լէն ետքը՝ ուրախ սրտով ու բերկ-
 րեալ հոգւով կ'անցնի կ'երթայ
 երանաւէտ կենաց ու յաւիտե-
 նական փառաց մէջ . և այն երա-
 նաւէտ կեանքով կ'ըզմայլի ու
 կը վայելէ Աստուածային անթա-
 ռամ փառքը , ու մեր Տէր Յի-
 սուս Քրիստոսի ամենացանկալի
 և անճառելի փառաւորութիւ-
 նը՝ յաւիտեանս յաւիտենից :

Աւրեմն եկէք յօժար կամօք
 հոգ տանինք ու ջանք ունենանք
 խորհուրդներնուս մէջ՝ խօսքեր-
 նուս մէջ՝ և գործքերնուս մէջ
 բարի ըլլալու , ինչպէս որ Առա-

քեանն ալ մեզ կը յորդորէ :

Խորհինք Աստուածային բաները, խօսինք՝ ընկերներնուս շահաւոր և օգտակար եղած բաներուն վրայով՝ և հոգիներնուս պայծառացուցիչ խօսքերը, և տքաշիինք գէշ ու ծուռ գործքերէն ու վարքերէն, ու հետեւինք առաքինական և բարեպաշտ գործքերու :

Ար չըլայ թէ՛ այն երկնային շնորհքներէն և տ մնանք ու զըրկըվինք . և մեր թուլութեամբը և տգէտ կամքովնիս՝ չըլայ որ պարսպ երթայ և անպտուղ ըլլայ մեր վրայ՝ Աստուծոյ բարեբարութիւնները, անչափ պարգեւները, և անհամար շնորհքները, որ ինքը առատ առատ կը պարգեւէ մեզի ձրիաբար՝ մեր փրկըվելուն յատուկ միջնորդ և

օգնական ըլլալու մը պէս :

« Օգոյշ լերնէք գուցէ որ
յեանեալ գտանիցի 'ի շնորհացն
(Լէւր . Ժբ . 13) :

Վործակից եմ ձեզ և աղա
չեմ, մի ընդունայն զշնորհսն Աւ
տուծոյ ընդունիլ ձեզ » (Բ .
Լյւրն . Դ . 1) :



Գ Լ Ո Խ Խ Ժ .

Ի՞նչ ինչ են՝ Քրիստոսի Եկեղեցւոյն
յատուկ նշանները :

Քրիստոսի Եկեղեցւոյն ճշմարիտ ըլլալը յայտնի կ'երեւայ, և իրաւամբ ան կ'ըսովի Քրիստոսական Եկեղեցի, որ ունի այս չորս գլխաւոր նշանները՝ իր գերազանց կատարելութիւնը ցուցունող :

Արոնք կը դնենք հոս՝ սրբազան և եկեղեցական գրքերէն առնելով ճիշդ, և մեր ուղղափառ դաւանութեամբը, որ ասոնք են. միութիւն, սրբութիւն, ընդհանրականութիւն, և առաքելականութիւն. ինչպէս որ չորսն ալ մէկէն առնելով՝ կը

կարդամք մեր ժամագրքին մէջ .
 « Սասն միայնոյ սուրբ կաթուղի-
 կէ և առաքելական Աղեղեցւոյ » :

Քրիստոսի Աղեղեցին էն ա-
 ռաջ Սիութեան նշանը ունի .
 որովհետեւ զանազան պատճառ-
 ներով և վայելուչ խորհրդով մի
 է Յիսուս Քրիստոսով , որ մէկ
 հատիկ բանաւոր հօտի մը պէս՝
 կը խնամի ու կը պաշտպանվի մէկ
 հատիկ քաջ և ամենակարող հա-
 վիւ Յիսուսին ձեռքովը , որ իր
 անձը գրաւ իր ոչխարներուն
 վրայ :

Քրիստոսի Աղեղեցին՝ այսին-
 քրն հաւատացելոց բաղմուծիւ-
 նը՝ թէպէտ տարածված ու ցր-
 ված կ'երեւան բոլոր աշխարհիս
 ամէն կողմերը՝ զանազան ազգե-
 րով ու շատ տեսակ լեզուներով
 զատված , բայց մէկ են Քրիստոս

Յիսուսով . որովհետեւ Ահեղեցին մէկ ամբողջ մարմին մըն է խորհրդական , որ սէսպէս ուղեղափառ հաւատացեալներէ՝ իբր թէ զանազան անդամներէ բաղկացած , և այն մէկ հասիկ ճշմարիտ գլուխին այսինքն Քրիստոսին հետ կապուած է . « Ալ ձայնի իմում լուիցեն . և եղիցին մի հօտ և մի հովիւ (Յժ . Ժ . 16) :

Արպէս մարմին մի է , և անդամս բազումս ունի , և ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին են , նոյնպէս և Քրիստոս :

Այլ դուք մարմին Քրիստոսի էք , և անդամք յանդամոց նորա » (Ա . Արհ . Ժբ . 12 . և 27) :

Քրիստոսի Ահեղեցին իբր ամենադավերլի միութիւնը կը զբոսնէ՝ մկրտութեամբ հողեւորաւ

պէս նորէն ծնանելուն մէջ . որ
 աղգաւ ու լեզուով ու տեղով
 մէկզմէկէ հեռու ըլլողները՝ աս
 բանին մէջ հոգեւորապէս կը
 միանան Վրիտտոսի մի և նոյն շք-
 նորհական նմանութեամբ , և
 Մշեատարանական վարդապետու-
 թեան մի և նոյն ճշմարիտ հա-
 լատքով , և սուրբ Հոգւոյն մի և
 նոյն կենդանաբուղիս աղբիւրէն
 կը խմեն ամէնքն ալ՝ շնորհաց ան-
 մահարար բաժակը . ամէնքն ալ
 մի և նոյն կերպով որդեգիր և
 ժառանգ կը գրվին մի և նոյն Հօր
 Աստուծոյ երկնաւորի , և ամէն-
 քը մէկէն հրաւիրված կ'ըլլան
 երկնային փառաց և յաւիտենա-
 կան անմահ կենաց մէկ հատիկ
 յուսոյն :

Ասացեաց մարդարէութիւնը
 խորհրդական յարմարութեամբ

կատարված կ'երեւայ աս բանին վրայ (Ը . 39) :

Ահա Արեւելեացիներն այսինքն զանազան հաւատացեալ ազգերը՝ շատ տեսակ ազգային ծէսերով, արարողութիւններով, և սովորութիւններով տարբեր սիրտ ունին « սիրտ այլ », բայց մի և նոյն ճշմարիտ և ուղղափառ հաւատքով և դաւանութեամբ՝ ու Քրիստոսէն աւանդեալ սրբացուցիչ և կենդանարար խորհուրդներուն միօրինակ ներգործութեամբը՝ ամէնուն ճամբան մէկ է « ճանապարհ մի », որ զամէնն ալ միօրինակ կերպով կը տանի դէպ ՚ի Աստուածային փառաց յաւիտենական երանութիւնը . ինչպէս որ այս վկայութիւններով յայտնի կ'երեւայ այս բաժնէն :

“ Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի իցեն, որպէս դու Հայր յիս՝ և ես ՚ի քեզ. զի և նորա ՚ի մեզ իցեն (Յօհ. Ժէ. 20) :

Արք միանգամ ՚ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խախը՝ ոչ հրէի, և ոչ հեթանոսի. ոչ ծառայի, և ոչ աղաաի. ոչ արուի, և ոչ իգի. զի ամենեքին դուք մի էք ՚ի Քրիստոս Յիսուս (Գալ. դ. 27) :

Մի մարմին և մի հոգի. որպէս և կոչեցարուք ՚ի մի յոյս կոչման ձերոյ : Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն ” (Աթլեոս. դ. 4. 5) :

Բայց Այլեզեցւոյ միաբանական սիրոյն միութեանը վրայօք՝

կը թողում որ հողեղգոն իմաստունները խորհին . որ իրաւ՝ այս սուրբ սէրը՝ մաղնիսական զօրութենէն առաւել սքանչելի կերպով՝ Ակեղեցւոյ այլեւ այլ ու ռոշված անդամները իրեն քաշելով, մէկզմէկու կը մօտեցնէ ու կը կապէ մի անձ և մի հողի պէս, և մէկ մարմին ընելով զամ մէնքը՝ մի միայն Քրիստոս գլուխին հետ կը միաւորէ :

Արանի անոնց, որ կը յարգեն այս միաբանական սուրբ սէրը, երանի անոնց, որոնք կը յօժարին այս անարատ բաժակը ըմպելու, որուն լեցընող բաժնողը՝ Ար աւնուն Յիսուսն է :

Արանի անոնց, որ այս միաբանական սիրով հաստատոված են կենդանի ճիւղի պէս այն ճշմարիտ որթին վրայ, որ է Յիսուս

Քրիստոս . որ անոր Աստուածա-
յին զօրութեանը հաղորդ եղած
ըլլալով , զանազան առարկինու-
թիւններու առատ պտուղներով
կ'աճին ու կը զարդարին (Հօհ .
Ժե . 5) :

Աւր որ կը տիրէ Քրիստոսէն
նուիրված այս սուրբ սէրը , հոն
նախանձութիւն չի կայ . ո՛չ ալ
մէկը մինակ իր անձին պատիւը
և գովութիւնը կը փնտրուէ . ո՛չ
մեծամտութիւն կայ՝ ու ո՛չ հը-
պարտութիւն . ո՛չ անամօթ հա-
մարձակութիւն , ո՛չ ալ ինքնա-
հաւանութիւն . այլ միշտ բարի յօ-
ժարութեամբ՝ ընկերին աղէկու-
թիւնը ուղել մը , և ամէն մարդ-
ամէն մարդու հետ խաղաղու-
թիւն ունենալ մը :

Հոն կը փայլի հեղութիւն և
սրտի խոնարհութիւն . հոն՝ կա-

րօտեալներու վրայ գթութիւն
 և խնամածութիւն կը ծաւալի .
 կը փախչի անկէ անիրաւութիւ-
 նը ու ստութիւնը , ու կը թա-
 գաւորէ արդարութիւնը ու ճշ-
 մարտութիւնը : Ի՞նչ երկրնցը
 նեմ խօսքս , լըմընցանձը ըսեմ .
 Ահեղեցւոյ այս միաբանական
 սէրը՝ մեզ չէ թէ միայն մահուա-
 նէ ազատելով՝ դէպ ՚ի յաւիտե-
 նական երանաւէտ կեանքը կը
 տանի , ու մեզաց խաւարէն հա-
 նելով՝ դէպ ՚ի շնորհաց և արդա-
 րութեան ամենապայծառ լոյսը
 կը հասցընէ , այլ մեզ ծայրագոյն
 բարութեան հաղորդ ալ կ'ընէ .
 Աստուծոյ հետ կը միաւորէ , ու
 դէպ ՚ի Աստուած կը վերցընէ
 զմեզ :

Աս ամէնք տե՛ս , ու միտք առ-
 նելով կարդա՛ւ Ա . Կր՛ն . ԳԼ . Ժգ . 4

համարին մէջ՝ մինչեւ 6 համարը ,
 ու Ս. Կաթողիկոս . Յովն . Գ . ԳԼ . 14 հա-
 մարին մէջ , ու Գ . ԳԼ . 16 համա-
 րին մէջ :

Այս սիրոյ միութեան Քրիս-
 տոսադրոշմ՝ նշանով կը ճանչցըվի
 Քրիստոսի Ակեղեցին . ասով
 բոլոր ուղղափառ հաւատացեալ-
 ները մէկ սիրտ մէկ հոգի կ'ըլլան
 անանկ որ՝ ոչ տեղերու հեռաւո-
 բութիւնը և ոչ ազգաց զանա-
 զանութիւնները կրնան զատել
 զանոնք մէկզմէկէ . որովհետեւ
 այս սուրբ միութեան ամուր կա-
 պովը կապված են :

Նաեւ Աստուածահաճոյ և
 ամենաբազմը պատուներ կուտայ
 այս սուրբ սիրոյ ծառը , որ մին-
 չեւ երկինքը բարձրացած է , և
 Աստուծոյ ամենահնար ձեռքովը
 տնկրված է սուրբ Ակեղեցւոյ

պարտէզին մէջ . որուն հաստա-
տու թեամբ արմատանալը ու ա-
նուչ պտուղներով լեցիլիլը կ'ու-
զէ : « Օ՛ր դուք երթայցէք՝ և
պողարերք լինիցիք . և պտուղն
ձեր կացցէ :

Օ՛յս պատուիրեմ, զի սիրեա-
լիք զմիմեանս (Յճ . Ժե . 16 . 17) :

Օ՛ր սէրն զոր սիրեցեր զիս՝
ի նոսա իցէ , և ես ՚ի նոսա (Յճ .
Ժէ . 26) :

Եւ բաղմութեան հաւատա-
ցելոց էր սիրտ և անձն մի »
(Պրծ . դ . 32) :

Քրիստոսի Եկեղեցւոյն կա-
տարելութեան երկրորդ նշանը՝
սուրբ ըլլալն է . և ասիկայ շատ
պատճառներով հաստատ կ'երե-
ւայ , որոնցմէ գլխաւորները դը-
նենք հոս :

Նախ՝ Քրիստոսի սրբութիւ-

նախք. որովհետեւ Քրիստոս Ա-
 կեղեցիին գլուխն է, ինչպէս որ
 Առաքեալք կ'ըսէ, և նոյն ինքն
 բնութեամբ և էութեամբ սուրբ
 է, և բոլորովին սրբութիւնն է,
 և ահա այս ամենամաքուր սրբ-
 բութեան հաղորդեղաւ Ակե-
 ղեցին՝ այսինքն հաւատացեալ
 ներք, ըստ որում բարոյական
 մարմին մըն է՝ իր սրբազնասուրբ
 գլխոյն հետ միացած, այսինքն
 Յիսուս Քրիստոսին հետ: Աւս-
 տի թէ որ Ակեղեցւոյ անդամնե-
 րէն մէկը՝ Քրիստոնէական ճշ-
 մարիտ և սուրբ հաւատոյ ուղ-
 զափառ դաւանութեամբ՝ ան-
 բաժանելի մնայ իր սրբարար ու
 ճշմարիտ գլուխէն՝ այսինքն Յի-
 սուս Քրիստոսէն, ամենեւին
 հերետիկոսութեան մը մէջ չի մտ-
 լորելով՝ և սոսկալի ուրացու-

Թեան մէջ չիյնալով, անշուշտ
ունի անիկայ Քրիստոսի անա-
ղական սրբութիւնը՝ այս հաս-
տատ վկայութիւններով: « Ար-
ճնանելոցն է 'ի քէն՝ սուրբ է .
(ՂԳ . ա . 35) :

Այլ դուք սուրբ էք, այլ ոչ
ամենեքին (Յճ . Ճգ . 10) :

Այլ դուք ազգ էք ընտիր,
Թագաւորութիւն, քահանայու-
թիւն . ազգ սուրբ, ժողովուրդ
սեպհական (ՊԷ . Ա . Կաթ .
բ . 9) :

Ահեղեցւոյդ Աստուծոյ՝ որ է
'ի Կորնթոս՝ նուիրելոց 'ի Քրիս-
տոս (Յիսուս, կոչեցելոց սրբոյ՝
ամենեքումքք հանդերձ, որ կար-
դան զանուն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի յամենայն տե-
ղիս նոցա և մեր » (Ա . Կորն .
ա . 2) :

Այրկրորդ՝ ճշմարիտ հաւատոյ
 սրբութիւնը ունի Ակեղեցին ,
 որովհետեւ ընդունած է Աստ-
 ուածային Աւետարանական պատ-
 դամները ուղղափառ մտքով ու
 անարատ խորհուրդով , որ այն
 սուրբ պատգամները մտքերնիս
 կը բանան՝ ճշմարտութիւնը
 ճանչնալու , և կամքերնիս կը յօ-
 ժարեցընեն բարի գործքերու .
 ու սրտերնուս և հոգիներուս մե-
 ջէն դուրս հանելով անմաքուր
 խղճմտանքները և չար խորհուրդ-
 ները , զմեզ սուրբ տաճարներ կ'ը-
 նեն Աստուծոյ բնակութեանը
 համար . որովհետեւ՝ Տէր Աստու-
 ծոյ խօսքերը՝ սուրբ խօսքեր են .
 « Բանք տեառն են բանք սուրբ »
 որ սուրբ կ'ընեն զամէն ընդու-
 նողները : « Սուրբ արա՛ զնոսս
 ճշմարտութեամբ քով , զի քս

բանդ ճշմարտութիւն է (Յօհ .
 Ժէ . 17) :

Գուք արդէն իսկ սուրբ էք
 վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ
 ձեզ (Յօհ . Ժէ . 3) :

Եւ ոչինչ ընտրութիւն արար
 ՚ի մէջ նոցա և մեր , հաւատովք
 սրբեալ զսիրտ նոցա (Գործ .
 Ժէ . 9) :

Տաճար Մատուց սուրբ է ,
 որ էք գուք » (Ա . Կրն . Գ . 17) :

Երբորդ՝ մկրտութեան սրբա-
 բար խորհրդովք սուրբ է Եկե-
 ղեցին . որով կը մաքրուին հոգի-
 ները մեղքի աղտեղութենէն ,
 ու սուրբ և անարատ ամանի մը
 պէս՝ Մտուածային զանազան շք-
 նորհքները ընդունելու կը պատ-
 բաստրվին , կամ սուրբ կոյսի մը
 պէս՝ դէմը կ'ելան անմահ և երկ-
 նաւոր փեռային՝ որ է (Յիսուս

Քրիստոս , ու կը հրաւիրվին լուսեղէն և երկնային առաքաստը մանաղու համարձակ , այսինքն արքայութեան յաւիտենական փառքին մէջ :

Աստի անոնք որ ունին մկրտութեան խորհրդոյն սրբութիւնը , ու այն հոգեւոր ճնուները , որով Հօր Աստուծոյ որդեգիր , և երկնային փառաց ժառանգէրլան , Քրիստոսի Ակեղեցի կը սեպվին :

« Աթէ ոչ որ ճնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ (304 . գ . 3) :

Արպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի , և զանձն իւր մատնեաց վասն նորա . զի զնա սրբեացէ սրբութեամբ աւաղանին բանիւ , զի կայուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի ,

դի մի ունիցի արատ ինչ կամ աղ-
տեղութիւն , կամ այլ ինչ յայս-
պիսեաց . այլ զի իցէ սուրբ և ա-
նարատ » (Եփ . ե . 25) :

Արդ՝ որովհետեւ ամենա-
սուրբն Աստուած իր բարերար
մարդասիրութեամբբ հաճեցաւ
մեզ կոչելու , և ասանկ սրբացու-
ցիչ խորհուրդներու մէջ հաս-
տատելու , և մեզաց աղտը մեր
վրայէն մաքրելու , և հոգիներ-
նուս տգեղութիւնը՝ իր Աստ-
ուածային մաքրութեանը ու սրբ-
ութեանը դարձնելու , ու բե-
մին մենք ալ պարտական ենք՝ մո-
լութեանց չար գործքերը մեր
վրայէն մեկզի նետելու , ու ա-
ռաքինի բարեգործութիւններով
վարքերնիս շահելու , ու վարուց
և գործոց սրբութիւնը ձեռք
բերելու , որով յաւիտենական

փառքը՝ և Յիսուս Քրիստոսի
 երանու թիւնը ժառանգելու ար-
 ժանի ըլլանք, ինչպէս որ կը յոր-
 դորէ մեզ սրբազան Առաքեալն
 Պետրոս :

« Այլ ըստ սրբոյն՝ որ կոչեաց
 զձեզ, և դուք սուրբք յամենայն
 գնացս ձեր լինիջիք » (Պ՛ր . Ա .
 Կաթ . ա . 15) :

Քրիստոսի ճշմարիտ Այլեղեց-
 ւոյն երրորդ նշանը Աթաղիկէ
 ըլլալն է . որ յունարէն իս-մէ-
 նիսի կամ Գաթաղիկէ կ'ըսվի . և մեր
 լեզուով տիեզերական և ընդ-
 հանուր կը թարգմանվի, որովհե-
 տեւ ուղղամիտ և ճշմարիտ հա-
 ւատքը՝ ու աւետարանի ողջամիտ
 վարդապետութիւնը՝ ու Քրիս-
 տոնէական սուրբ կրօնը՝ բոլոր
 աշխարհ տարածված, ու ամէն
 լեզուով ամէն ազգաց քարոզ-

ված է .

Ուստի՛ ուր որ և որ ազգի մէջ որ ընդունած է մէկը այս ուղղափառ հաւատքին վարդապետութիւնը , և անոր մէջ անխախտ կը մնայ հաւատոյ հանդանակին դաւանութենէն դուրս չելլելով , ու Վստուածաշունչ սուրբ գրքին՝ այսինքն հին և նոր կտակարաններուն լուսաւոր և հաւատարիմ մեկնութիւնը ընդունելով , ու Վստուածագումար սուրբ ժողովքներուն մէջ հոգւով սրբով վճարված խօսքերուն վրայ , ու սրբազան հայրապետաց գրուածքներուն վրայ հաստատովելով , անանկ մարդը՝ իրաւամբ կրնայ սեպիկ ու ըսիկ՝ Վասթուղիկէ՛ Նիկեղեցւոյ դաւակ . որ ուղղափառ հաւատքի մէջ անմուտք ըլլալովն ալ՝ կ'ըսվի ուղղափառ .

որուն կ'ըսեն յոյները՝ օրթօփօթսօս :
 Ուրեմն Քրիստոսի Ակեղեցին՝
 ու անոր անդամները անանք են որ՝
 հաստատ և առանց մոլորելու
 կեցեր են այն սուրբ հաւաքին
 մէջ, որ ճշմարիտ հաւատոյ հե-
 ղինակը Յիսուս Քրիստոս սորվե-
 ցուց և իբ շնորհքովք բոլոր աշ-
 խարհ տարածեց անանկ որ՝ դը-
 ժոխքին դուռները շեն կրնար
 յաղթել զանիկայ :

« Արթայք յաշխարհ ամենայն,
 և քարոզեցէք զաւետարանն ամե-
 նայն արարածոց . որ հաւատայ
 և մկրտեցի, կեցցէ . և որ ոչ հա-
 ւատայ՝ դատապարտեցի (Մարկ.
 Ժե . 15) :

Վասն յուսոյն՝ որ պահի ձեզ
 յերկինս, զորմէ լուարուք բա-
 նիւն ճշմարտութեան աւետա-
 րանին՝ որ Եհաս առ ձեզ, որպէս

ընդ ամենայն աշխարհ աճէ և պտղաբերէ, որպէս և ՚ի միջի ձերու մ' (կողս . ա . 5) :

Այլ յամենայն ազգս՝ որ երկրն շին ՚ի նմանէ, և գործէ զարդարութիւն, ընդունելի է նմա՞ (Գործ . Ժ . 35) :

Քրիստոսի Ակեղեցւոյն կատարելութեան չորրորդ նշանը՝ Առաքելական ըլլալն է . այսինքն՝ Քրիստոսի ճշմարիտ Ակեղեցիներն է որ՝ սրբազան Առաքելոց ճշմարիտ վարդապետութեան և քարոզութեան հիմին վրայ անխախտ և անշարժ հաստատուած է, ու անոնց աւետարանական աւանդութիւնները անխափան պահած է : Չըսինք թէ՛ Առաքելոց վրայ հաստատուած է Ակեղեցին, այլ անոնց վարդապետութեանը ու դաւանութեանը վր

րայ . որովհետեւ ճշմարիտ հաւ
ւատոյ բուն հեղինակը՝ բացար-
ձակասէս Քրիստոսն եղաւ , ե
ան է՝ Ահեղեցին կանգնեցընող
առաջին և մշտնջենաւոր հիմը ,
ինքը՝ իր կենսաաձիր վարդապետու
թիւնները անմիջաբար՝ իրմէն աւ
ւանդելով , և շնորհաբուղիս օրէ-
նքսդիր մը ըլլալով . ինչպէս որ՝
կ'ըսէ , « Աւ մի կոչէք ուսուցիչք ,
դի ուսուցիչ ձեր Քրիստոս է
(Մատ . իգ . 10) : Օ՛ր հիմն այլ
ոչ որ կարէ դնել քան զեդեալն՝
որ է Յիսուս Քրիստոս » (Ա .
Կրն . գ . 11) :

Բայց սուրբ Առաքեալները՝
Քրիստոսի ճշմարիտ հաւատքին
քարոզիչ եղան , և Ահեղեցւոյ
այս հրաշալի հիմնարկութեանը
վարպետ գործակալներ՝ և սպա
սաւորներ եղան :

Այս բանին վրայ յայանի կը
 խօսի Հայր Վարդիէլը՝ Պօղոսի
 Թղթոց մեկնութեանը մէջ՝ (Բ.
 հատոր . յերես . 533) . ըսելով
 Թէ՝ «Օ, ի Առաքեալքն ոչ ըստ
 անձանց իւրեանց կամ ըստ դօ-
 րութեան եղևն հիմն եկեղեցա-
 կան շինուածոց, այլ ըստ վարդա-
 տուութեանն՝ զոր քարոզեցին » :
 Այլ դարձեալ այն գրքին մէջ՝
 534 երեսը՝ կ'ըսէ . «Սիայն Ա-
 ռաքեալք և Վարդարէք կոչին հի-
 մուք Այկեղեցւոց . այսինքն իբ-
 րեւ պաշտօնեացք հիմնարկու-
 թեան նորա ի ձեռն վարդատու-
 տութեան իւրեանց և վկայական
 ջանից ի տարածանել զհաւատս
 Այկեղեցւոց . ապա Թէ ոչ առա-
 ջին և վերամբարձող հիմն՝ մշտըն-
 ջենաւոր և բացարձակ է միայն
 Յիսուս Քրիստոս » :

Սրբազան Առաքեալները՝ չէ
 թէ Սարգարէներուն պէս մութ
 օրինակներով ու գալու բանե-
 րուն վկայութեամբը ցուցուցին
 մեզի փրկչին Քրիստոսի շնորհա-
 կան օրէնքը, այլ անձամբ ու բը-
 նակութեամբ անոր հետը ըլլա-
 լով, և անոր Աստուածային հը-
 բաշքները աչքովնին տեսնելով,
 և անոր կենսաբուղիս խօսքերը
 ականջովնին լսելով, արձակ հա-
 մարձակ վկայութեամբ քարոզե-
 ցին բոլոր աշխարհ անոր ճշմա-
 բիտ հաւատքը, ու անմահ կեն-
 դանութեան աւետարանը: Աւս-
 տի՛ որ հաւատացեալ ու մկրտեալ
 ազգը ըլլայ՝ թող ըլլա, ան որ ան-
 խախտ հաստատված կեցեր է
 Առաքելական քարոզութեան աշ-
 խարհատարած վարդապետու-
 թեան ու դաւանութեան մէջ,

ճշմարտապէս կ'ըսվի Առաքելա-
կան Աղեղեցի . ինչպէս որ աս
վկայութիւնները շիտակ մտքով
քննողներուն յայտնի է : « Գնա-
ցէք այսուհետեւ՝ աշակերտե-
ցէք զամենայն հեթանոսս . մը-
կըրտեցէք զնոսս յանուն Հօր՝
և որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ . ու-
սուցէք նոցա պահել զամենայն՝
զոր ինչ պատուիրեցի ձեզ (ՍՊ .
ԻԸ . 19) :

Այլ Աստուծոյ շնորհք՝ որ
յամենայն հաշակ հարկանէ ըզ-
մէնջ 'ի Քրիստոս Յիսուս . և
զհոս գիտութեանն իւրոյ յայտ-
նի առնէ մեօք յամենայն տեղիս
(Բ . ԿԴՆ . Բ . 14) :

Օ, որ տեսաքն և լուաք՝ պատ-
մեմք և ձեզ, զի և դուք հաղոր-
դութիւն ունիցիք ընդ մեզ . և
մեր հաղորդութիւնն իցէ ընդ

Հոր և ընդ Արդւոյ խրում Յիսուսի Քրիստոսի" (Յօհ. Ա. Կաթն. ա. 3) :

Աւստի՛ Աստուծոյ զանազան շնորհքները քանի որ հեղեղներու պէս այսչափ առատ կը վազեն, չըլլայ որ մե՛նք զուրկ դըրանք ինքն ինքն, ու ծակ սափորի պէս ամաններն իս չլեցընենք : Արովհետեւ աշխարհասէր մարդուն սիրտը զանազան մտուածիւններով ու մարմնաւոր հեշտուածիւններով ծակ ծակ ու կտորած է, ու չէ թէ ամբողջ է Աստուած սիրուածեամբ և բարեգործուածեամբ, անոր համար չի կրընար ընդունիլ երկնաւոր ու հոգեւոր բարիքները :

Չըլլայ որ ազահուածեամբ ու ժրատուածեամբ ողորմուածիւնը խնայենք աղքատներէն ու մեր

կարօտեալ եղբայրներէն, որ մենք
 ալ պարապ եւ չգտանանք շը-
 նորհք բղխող կենաց աղբիւրէն՝
 այսինքն Յիսուս Քրիստոսէն .
 ինչպէս որ այն ազահ եւ արծա-
 թասէք երիտասարդը՝ սիրաբ իր
 ունեցած հարստութեանը վրայ
 փակցուցած ըլլալով՝ չուզեց աղ-
 քաններուն ողորմիլ . եւ անոր հա-
 մար ինքիրէն զատուցաւ ու օ-
 տարացաւ այն ծայրագոյն բա-
 րիէն՝ որ է Յիսուս Քրիստոս .
 ու երկրաւոր հարստութիւնը՝
 երկնից արքայութեան յաւիտե-
 նական փառքէն վերսեպելով՝ զքր-
 կրվեցաւ ձրի շնորհքներու ան-
 հասնում գանձերէն, որ ոչ կը
 գողցրի, եւ ոչ կը կորսրի (Մատթ.
 ԺԺ . 22) :

Եւրդ՝ Քրիստոսի մեր բարե-
 ըստ փրկչին այսչափ անեթիւ սրբ-

բարաբ շնորհքներովը՝ յարմարենք
 մեր գործքերը իր Ահեղեցւոյն
 պանծալի նշաններուն, որով ար-
 ժանապէս ըլլանք Ահեղեցւոյ ան-
 դամներ՝ և Քրիստոսի բարոյա-
 կան մարմին. ու Աստուածային
 խաղաղութեան և սուրբ սիրոյ
 կապովը միացած՝ մի սիրտ և մի
 հոգի ըլլանք :

Բանակալիւ ու վիճաբանասէր
 ջրլանք անանկ անօգուտ խնդիր-
 ներու վրայ, և մեր մտացածին
 կարծիքներուն վրայ. որ անով՝
 չէ թէ միայն կը զարնելինք իրարու
 հետ, ու մէկզմէկու սիրտը կը ծա-
 կենք, այլ փուճ վիճաբանութիւն-
 ներով անմիաբան՝ և անհաշտ
 թշնամի ըլլալով իրարու, կերպ
 կերպ դայթակղութիւններով ու
 շփոթութիւններով հոգեւորա-
 պէս կը կործանենք մեզ մտիկ ընող-

ներքը . որ ատանկ բաներէն կ'արգիլէ մեզ Առաքեալը , և Ակեղեցւոյ Հայրերը . որոնք մեզի սորվեցուցին՝ խաղաղութեան հոգիով ու սիրով վառվիլ , և անանկով՝ ճշմարտութեան խօսքերը շիտակ հասկընալ ու շիտակ հասկըցընել ունկնդիրին , և Աստուածային սիրոյն բորբոքը վառված պահել սրտերնուս մէջ՝ Հոգւոյն սրբոյ Հնորհքովը (Տէճ. Բ . 14 : Սաղ . Ժբ . 19 : Յօհ . Ժե . 12) :

Ամենեւին մէկզմէկ սիրելէն ետ չմնանք , որ պաղաքեր ըլլաներսիգինիս այն մեծ սէրը՝ որ անով սիրեց մեզ՝ մեր կենարարն Յիսուս : Վիտնանք՝ թէ այն որ պիտի սիրենք , մեր եղբայրն է , ամէն ստեղծուածներէն աւելի սիրականն է Աստուծոյ , մանաւանդ որ՝ Աստուծոյ որդւոյն

պատուական արիւնովը ծախու
առնելիւմ է :

Աւրեմն բնաւ ետ շմանք
եղբայրսիրութենէն , որ Աստու
ածսիրութեան կնիքը չաւրլի
ներսիդինիս :

Թէ որ եղբայրնիս չսիրենք ,
զԱստուած չսիրած կ'ըլլանք . ա
նոր համար՝ դժուշանալու ենք՝
որ չըլլայ թէ սխալալութիւնով՝
անսխալալ Աստուծոյ լուսեղէն
պատմութեանը հանենք հոգիներ
նուս վրայէն , ու հազնինք սխա
կալ բանաարկու սատանային սե
ռ կորստեան անարգ հանդերձը :

Չըլլայ թէ նախատական խօս
քերով խոցենք մէկզմէկու սիրար ,
որ դժոխքի կրակին յախտենա
կան գատապարտութեանը պար
տաւ որ չըլլանք :

Արարանական սէրը մեծա

բե՛նք մէջերնիս , ու Վրիստո-
նէ ու թեան պարձանաց յատուկ
դրօշակի մը պէս՝ համարձակ առ-
ջեւնուս կրե՛նք զանիկայ (Զօհ .
ԺԳ . 35 : Գրծ . Բ . 1) :

Սաքրե՛նք սրտերնուս մէջէ՛ն
ամէն մեղքերը , որովհետեւ
սուրբ սիրար՝ մաքուր խղճմտան-
քը՝ ու բարեխորհուրդ միտքը՝
Լստուածային շնորհքով ու փառ-
քով զարդարված կ'ըլլայ , ու
Հոգւոյն սրբոյ բնակարան կը
պատրաստուի :

Ի՞նչ շահ կայ ինձի՝ Եկեղե-
ցիին Սուրբ եղած ըլլալուն նը-
շանէն , թէ որ ես անոր մասն ու
անդամը ըլլալով՝ դիզեմ ու ըն-
ցընեմ սրտիս մէջ բազմատեսակ
մոլութեան ախտեր , և հոտած
մեղքեր . ինտո՞ր ան տտենը կըր-
նամ համարձակիլ՝ Վրիստոսի Եւ

կեղեցւոյն սրբանուէր անդամը
կոչվիլ :

Թէ որ ես բիւրաւ որ չարա-
գործութեանց յանցանքներու
մէջ ընկղմած ըլլամ իմ բոլոր սիր-
տըս , մի թէ հոգիս բեհեզեաց
սպամուճաններով ու ծիրանի
զգեստներով կը զարդարվի , չէ
որ պէս պէս մարմնաւոր զարդե-
րը՝ ազնիւ ու անուշահոտ իւզեր
քալիլը՝ ու անցաւոր զուարճու-
թիւններու հետեւիլը՝ դուրսէն
զարդարված գերեզման մը կ'ընեն
հոգին , որոնք դրսէն ազվոր կ'ե-
րեւան մարդոց աչքին , բայց
ներսէն լեցված են չարութիւն-
ներով , ու ատելի են Աստուծոյ
առջեւը (Մատ . իգ . 27 : Հռով .
ժբ . 1) :

Աստիճակի վարքով ու ողջ միա-
քով հնազանդիներ ու հետեւիներ

Քրիստոնէական ճշմարիտ վարդապետութեան, որ բոլոր աշխարհ տարածված է, ու Նստուածային գիտութեան լուսովը վառված լապտերի մը պէս կը փայլի ամէնու՛ն աչքին առջեւը, որ այն լուսաւորութեամբ՝ հաւատքի գաղտնիքները երեւան կ'ելան, և զմեզ՝ դէպ ՚ի լուսաւոր վարույց և առաքինի գործոց նաւահանգիստը կ'առաջնորդեն. և անանկ հոգինիս այն վիճակին մէջ՝ այնուհետեւ ապահով կը մնայ մեզայ խաւարին մէջ իյնալէն, ու կենդանի վէմերու պէս կ'ըլլանք հոգեւոր տաճարներ, ու Նստուածային փառքը կ'երեւայ վրանիս մեզ զարդարած, և անանկով կը զօրանանք մեր չար կիրքերը յաղթելու, և Նկեղեցւոյ բարի ու առողջ անդամները

ըլլալու : Վայց մուտքեաները ի
բաւամբ կ'ըստին չար ու ատա-
ւոր անդամ Նկեղեցւոյ :

Ազգաբառ հաւատոյ այս
ընդհանուր տարածութիւնը ա-
մենեւին չթուլընէր մեր սիրտը,
այլ մեզի սիրտ կուտայ, թէ բո-
լոր աշխարհիս մէջ մօտ է ու կ'օգ-
նէ մեզի մեր Տէր Յիսուս Քր-
բիստոսը, և մեր տկարութեանը
թեւ թիկունք կ'ըլլայ :

Այս տիեզերասահման հա-
ւատոյ ճշմարտութիւնը՝ մեծ ու
լայնատարած տաղաւարի մը պէս
իր տակը կը պարունակէ զանանք,
որ իրեն կռթնած են, և ուղիղ
սրտով իրեն ապաւինած են, ու
աներկիւղ և ապահով կ'ընէ զմեզ
ամէն պատահարներէն՝ և մեր
հոգւոյ թշնամիին բռնութիւն-
ներէն (Յօ՛ւ. Ը. 32. 10. Ժա.

6 : Հովհ. Ժ . 12) :

Մէկզմէկու աղէկու թիւնը
մտմտանք . եղբայրներնուս և ըն-
կերներնուս՝ բարի վարքով օրի-
նակ ըլլանք . մէկզմէկ առաքինա-
կան գործքերու յորդորենք . ա-
ռաքինու թեան հայելի ըլլան
գործքերնիս ու վարքերնիս .
սուրբ Առաքեալներուն նմանինք
խօսքով ու գործքով , սիրով և
խաղաղութեամբ . չէ թէ ճշմար-
տութեան քարոզիչ ըսկելու
միայն՝ ցանկանք , այլ նոյն ճշմար-
տութիւնը ամենուն տալին
գործքով մեծարելու ալ ջանք ու-
նենանք . աւետարանական կեն-
սածիր խրատները բերնով՝ լսել
տալու չնայինք այնքան , հասոյա
նայինք որ՝ գործքով տարածենք
զանիկայ՝ ամենքը դէպ ՚ի անոր
յորդորելու համար :

Վասն զի լոկ նշանով, կամ
 Առաքելոց ուղիղ դաւանու-
 թեան կնիքը ունենալով՝ թէպէտ
 կրնանք անուանիլ Առաքելական
 Աղեղեցի . բայց չենք կրնար՝ Ա-
 ռաքելալներուն պէս հաճոյ ըլլալ
 մէր Տէր Յիսուս Քրիստոսին,
 և անոր փառացը և երանու-
 թեանցը ժառանգակից ըլլալ :

Օ, ի ի նչ օգուտ է որ՝ Առա-
 քելոց ուղիղ դաւանութիւնը և
 ողջամիտ վարդապետութիւնը
 դաւանինք, ու գէշ վարք ու-
 նենանք :

Արեմն խօսքերնիս ու գործ-
 քերնիս սուրբ Առաքելոց խօս-
 քերուն ու գործքերուն յարմա-
 րենք, որ արժանապէս և իրա-
 ւամբ անուանինք Առաքելական
 Աղեղեցի, և գործքով՝ Քրիստոս
 սի հետեւող ըսվինք և անոր

անուանը փառաբանիչ ըլլանք
 ու զիդ հաւատարով և բարի գործ-
 քով (Սաթ . Ե . 16 : Փիլի . Գ .
 17) :



Գ Դ Ո Ի Խ Ժ Ա .

Եկեղեցւոյ եօթն խորհուրդները :

Ի՞նչ է խորհուրդը :

Խորհուրդը կը նշանակէ գաղտուկ բան մը . որ երկու կամ երեք հոգիի մէջ ծածուկ կը մնայ . ինչպէս որ մեր փրկութիւնը խորհուրդի մը պէս գաղտուկ պահված էր Ամենասուրբ Արքայազուծեան կամացը մէջ : « Օ խորհուրդն՝ որ ծածկեալ էր ՚ի յաւախեանից և յազգաց » (Կող . ա . 26) :

Խորհուրդ կ'ըսվի այն գործին, որ անոր մէջ գաղտուկ միտք մը կ'երեւայ . ինչպէս որ՝ երբ որ կը տեսնանք յայտնի բաներուն մէջ

մէկ գաղտուկ բան մը , կ'ըսենք
 թէ՛ խորհուրդ կայ հոս . իբր թէ՛
 ուրիշ բան կը տեսնենք աչքով ,
 և ուրիշ բան կը հաւատանք անոր
 մէջ՝ մտքով : Աւստի Այկեղեցւոյ
 եօթն սրբարար գործողութիւն
 ներք՝ վայելուչ կերպով ըսվեցան
 « խորհուրդ » :

Ասան զի այս փրկարար խոր-
 հուրդներուն զգալի ու նիւթա-
 կան արարողութիւններուն մէջ՝
 այսինքն , գինիին մէջ՝ հաղորդու-
 թեան նշխարին մէջ՝ մկրտու-
 թեան ջրոյն մէջ՝ միւռոնին մէջ՝
 ու խորհուրդներուն բոլոր հար-
 կաւոր նիւթերուն մէջ՝ շնորհ-
 ներու ծածուկ և աներեւոյթ
 զօրութիւններ ըլլալը կը հաւա-
 տանք :

Արդ՝ խորհուրդ ըսելով , կը
 տարբերի հին օրինաց նշաններէն .

որովհետեւ հին օրինաց ամէն
արարողութիւնները նշան էին՝
ու չէ թէ խորհուրդ . վասն զի
չունէին սրբարար զօրութիւն
մը . ինչպէս որ թլխատութիւնը
նշան մըն էր , որ կը զատէր կը ս-
րուէր Ատուածասպաշաները հե-
թանոսներէն : « Աշանակ առ
զթլխատութիւնն , կնիք արդա-
րութեան հաւատոցն » (Հովհ.
դ . 11) :

Աւրեմն հին օրինաց արարողական գործքերը՝ սուրբ գործար-
րութեան նշաններ միայն կրնանք
սեպել , որովհետեւ անոնք կը նը-
շանակէին միայն Քրիստոսի նոր
օրինաց խորհուրդներուն սրբա-
րար շնորհքները , բայց հոգւոց
փրկութեան շնորհքները չէին
կրնար պարզեւել , վասն զի ներ-
քին սրբարար զօրութիւնները

չունէին, այսինքն՝ հողինները չէին
կրնար սուրբ ընել, մեղաց անէծ-
քէն աղատելու արդարու թիւնը
չէին կրնար տալ, յաւիտենական
կենաց անմահու թիւնը չէին կրն-
նար վասարկցընել, Հօր Աստու-
ծոյ որդեգիր չէին կրնար ընել,
և երանական փառքը չէին կրնար
ժառանգել տալ:

Ինչպէս որ գործիքով շինված
նշանք՝ թէպէտ իրակէն ՚ի զատ ու-
րիշ բան մը կը նշանակէ, բայց
ինքը իր նշանակած բանին չինը-
մանիր, կամ թէ ըսենք, արշա-
լոյսը թէպէտ նշան մըն է արեւ-
ւին ծագելուն, ու արեւմտեան
ամայր՝ նշան մըն է անձրեւի, բայց
ոչ արշալոյսը արեւի զօրու թիւն
մը ունի, և ոչ ամայր անձրեւին
հետ նմանութիւն մը ունի: Ա-
սանկ ալ՝ ստուերական օրինաց

ամէն գործքերը՝ կը ցուցունէին միայն՝ Քրիստոսի Տեառն մերոյ սրբարար խորհուրդները , բայց չունէին այս խորհուրդներուն շնորհաց տպաւորութիւնները :

Ինչպէս որ լուացման ջուրը՝ (որ անով մարմնաւոր սրբութիւն կ'ըլլար քահանաներուն ձեռքովը), « Սուացի ջրով և սուրբ լիցի » (Վճ . Ժդ . 8), մկրտութեան նշանակէր , որով հողաւոր սրբութիւն կ'ըլլայ :

Օգտակական գառին զենումը՝ (որ անոր արիւնը Խորայէլացւոց դռներուն ճակատը սրսկելու հըրաման եղաւ), կը ցուցունէր հաղորդութեան խորհուրդը . բայց անով՝ Ժամանակաւոր մահէ ազատեց անոնց առ ջինեկները , սակայն ասով՝ յաւիտենական մահուանէ կը փրկըվինք : « Այժմէ

նչ կերթիջիք զմարմինն որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւնն նորա, սչ ունիք կեանս յանձինս » (Զօհ. զ. 54) :

Սարեկ ծառէն վար կախված խոյը՝ (որ Խասհակին տեղը զոհեղաւ), Քրիստոսի նշանակ էր, որ Աստուծոյ գառնուկը ըլլալով՝ կախվեցաւ խաչափայտին վերայ աշխարհիս փրկութեանը համար :

« Ահաւասիկ գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեզս աշխարհի » (Զօհ. ա. 29) :

Ահա՛ ասոնց ամէնը նշան կ'ըսվին, որովհետեւ հոգւոյ փրկութիւնն չէր ելլեր ասոնցմէ. այլ այն նոյն գործքերէն՝ նոր օրինաց կենդանարար շնորհքները նշանակված կ'ըլլային. միայն թէ՛ այն արարողութիւնները թէ՛ որ

արդար մարդիկ ընդունէին, Աստուծոյ անուամբը ընդունելով նին՝ Աստուծմէ տեսակ տեսակ խնամքներ կ'ըլլար անոնց, ու մեղաւորները՝ Աստուածահաճոյ դորձքի մը պէս ընելով այն արարողութիւնները՝ Աստուծոյ ողորմութեանը արժանի կ'ըլլային:

Ուստի նոր օրէնքը՝ «խորհուրդ» կ'ըլլի, որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսէն սահմանված է հոգւոյ միջուկութեան համար, և որ հարկուկուտայ արժանաւորներուն՝ տեսակ տեսակ սրբութեանց շնորհքներ, ըստ այնմ թէ՛ «Քանզի զսուտեր հանդերձելոյ բարեալքն ունէին օրէնքն, և ոչ զնոյն կերպարանս իրացն» (ԱԹԴ, Ժ, 1):

Գ Լ ՈՒ Խ Ժ Բ .

Ի՞նչ զօրութիւն ունին խորհուրդները :

Այս եօթն սրբաբար խորհուրդներով մեր բնութեան վիճակը կը փոխալի . վասն զի մեղաւորութենէ արդարութեան կը փոխալինք . դատասարաութենէ կ'աղատինք , ու շնորհաց և փառաց ընդունակ կ'ըլլանք . ուր թողունք որ՝ տեսակ տեսակ գերբնական զօրութիւններով կը զարգարովինք այս խորհուրդներուն ներդործութեամբը :

Այս եօթն խորհուրդներուն ամէն մէկը մէյմէկ առաքինութեան կը վերաբերին , որոնց երեքը կ'ըլլաին Աստուածաբանա-

կան առաքինութիւնք, այսինքն՝
հաւատ, յոյս, սէր. ու չորսը՝
բարոյական առաքինութիւնք.
որ ասոնք են. արիութիւն, ար-
դարութիւն, խոհեմութիւն,
բարեխառնութիւն :

Սկրտութիւնը սրբարար խոր-
հուրդ մըն է, որ կը մաքրէ հո-
գին սկզբնական մեղքէն. ու թէ
որ մկրտվողը չափահաս է, ու
ներդործական մեղք ալ ունի,
զանիկայ ալ կը մաքրէ :

Ասիկայ « Հաւատք » կ'ուզէ :

Թէ որ մկրտվողը չափահաս
է, պէտք է որ Քրիստոնէական
ճշմարտութիւնը դաւանի, այ-
սինքն՝ պէտք է որ ընդունի բո-
լոր այն ճշմարտութիւնները,
որ Առաքեալներուն տասներկու
կտոր խօսքերովը կաղմըված հա-
ւատոյ հանգանակին մէջ կը պա-

բունակիլի :

Վասն զի որբազան Ղաաքեալէ ները՝ Պէնտէկոստէին օրը՝ առաջ քարօղեցին Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը, ու ետքը մկրտեցին. ինչպէս որ կը պատմելի Վործք առաքելոցին մէջ Սրբազան Պետրոս Ղաաքեալին քարօղութեանը վրայօք, թէ՛ «Ոմանք յօժարութեամբ ընկալեալ զբան նորա՝ մկրտեցան» (Բ. 41) :

Իսպց թէ որ տղայ է մկրտուվողը, հերիք է անոր՝ իր ճնողադը, և կնքահօրը, և կամ մկրտող քահանային հաւատքը, որ տղային կողմանէ երաշխաւոր կ'ըլլան անոր դաւանութեանը. ուրոնք ետքն ալ կը պարտաւորին ստրվեցընել անոր՝ հաւատոյ ճըշմարտութիւնները, ու կրթել

բարի վարքով : « Որ հաւատաց
և մկրտեցի , կեցցի » (Մարի .
ժղ . 16) :

Վրոշմը զօրացուցիչ խորհուրդ մըն է , որ կը կնքէ մկրտա-
վածք՝ Հոգւոյն սրբոյ անջնջելի
շնորհքովը :

Վսիկայ « արիւթիւն » կու-
տայ , որով կը յաղթենք մոլու-
թիւններուն , և յառաջ կ'եր-
թանք առաքինութիւններու մէջ՝
Քրիստոսի կարիճ զինուորներու
պէս : « Եւ իբրեւ լուան (Վսիկ-
այիքն) մկրտեցան յանուն Տեա-
ռին Յիսուսի . և 'ի դնել 'ի վե-
րայ նոցա Պօղոսի զձեռն , եկն
Հոգին սուրբ 'ի վերայ նոցա ,
խօսելին լեզուս և մարգարէա-
նային » (Վարձ . ժԹ . 6) :

Հաղորդութիւնը կենդանա-
բար խորհուրդ մըն է , որ արժա-

նաւորներուն յաւիտեանական
կեանք կը բաշխէ : ասիկայ կը
տարաւորէ հոգիներնուս մէջ՝
Մատուածային « սէրը », որ անով
կը միանանք Վրիտաոսի հետ ,
« Ար ու աէ զմարմին իմ , և ըմպէ
զարիւն իմ , նա յիս բնակեացի ,
և ես 'ի նմա , և որ ու աէն զիս ,
կեցցէ վասն իմ » (Զօհ . զ . 55) :

Մտաշխարու թիւնը արդարա-
ցուցիչ խորհուրդ մըն է , որով
կատարեալ զղջմամբ մճարողնե-
րուն մեղքը կ'արձակվի , ու
Մատուածային շնորհաց ընդու-
նակ կ'ըլլովի . ասոր կը վայելէ
« արդարու թիւնը » . իբր թէ՛
ճշմարիտ ապաշխարողը Մատու-
ծոյ օրէնքները կը մեծարէ , ու
մեղաց անօրէնու թիւնները կ'ը-
ստէ , « Մեռացն որ զմեզս գոր-
ծէ , նաև զանօրէնու թիւնս առ »

նէ, և ինքն իսկ մեղքն անօրէն
նութիւն է ” (Ա . Յօհ . գ . 4) :

Սէրջին օծումը առողջարար
խորհուրդ մըն է, որ հիւանդներ
բուն հոգեւոր և մարմնաւոր ա-
ռողջութիւն կուտայ . ասիկայ
“ յոյս ” կ’ընծայէ՝ Աստուծոյ ո-
ղորմութեամբը սուրբերուն բը-
նակարանը հասնելու համար :
“ Յարուսցէ զնա Տէր, և եթէ
մեզս ինչ գործեալ իցէ, թողցի
նմա ” (Յակ . ե . 15) :

Կարգը հոգեւոր իշխանու-
թեան խորհուրդ մըն է . ասով
կ’ըլլայ մարդը՝ խորհուրդներու
սպասաւոր, ու Քրիստոսի բա-
նաւոր հօտերուն՝ հովիւ . ասոր
կը սպառչածի “ խորհմութիւնը ”
որ կարգը ընդունողը աղէկ կա-
ռավարէ Տէր Աստուծոյ ժողո-
վուրդը, որոնք Աստուծոյ որդ-

ւոյն փրկաւոր արիւնովը ծախու
առնելով՝ եւն : « Օգոյշ կացէք
անձանց եւ ամենայն հօտիդ , յու
րում եդ զձեզ Հոգին սուրբ
տեսուչս՝ հովուել զժողովուրդ
Տեառն՝ զոր ասրեցոյց արեամբ
իւրով » (Գործ . Ի . 28) :

Պսակը սուրբ միաւորութեան
խորհուրդ մըն է , որ անով կենա
կից կ'ըլլան այր եւ կին՝ իրարու
հետ սուրբ սիրոյ միաւորու
թեամբ կապված մնալով՝ զաւկը
ներ ծնանելու համար . ասիկայ
« բարեխառնութիւն » կ'ուզէ .
այսինքն չափ դնելու են իրենց
անկարգ ցանկութեանը , որ բու
լորովին մարմնական սղծութեան
մէջ չիցնան : « Օ՛ի որ ունիցին
կանայս , որպէս թէ չունիցին »
(Ա . Կորն . Է . 29) :

Գ Լ Ո Ի Խ Ժ Գ .

Ո՛վ է խորհուրդներուն հեղինակը
այսինքն սահմանողը :

Այս սրբարար խորհուրդներուն առաջին հեղինակը Հայր Աստուած է . որովհետեւ այս խորհուրդներուն օրինակը շատ կերպ բաներով ու զանազան նըշաններով կը ցուցունէր մեր նախահայրերուն՝ հին օրէնքին առեւեր . ու երբոր առեւեր հասարակացաւ , ու մարդարէները վերջացան , ու երբոր մեր փրկութեան համար սահմանված օրերը եկան հասան , ամէն այն առաջուց գրվածները սահմանեց ու հաստատեց իր փառակից Արդւոյն ձեռքովը :

« Բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք » (Աբր . ա . 1) :

Աւստի խորհուրդներուն անմիջաբար հեղինակը՝ Արդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս է . որովհետեւ այս ամէն շնորհաւ կան խորհուրդները ինքը բացառապատկառաւ անդեց իր աշակերտներուն՝ որք խօսքով ու որք գործքով . անոր համար Ահեղեցւոյ շնորհաբաշխ և սրբացուցիչ խորհուրդներուն բուն հեղինակը Յիսուս Քրիստոս է . ըստ այնմ , թէ՛ « Շնորհք և ճշմարտութիւն ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղև » :

Արդ՝ պէտք է գիանալ , թէ մեր Տէր Յիսուսը սուր և երբ և ինչ կերպով ըրաւ խորհուրդներ

բուն սահմանադրութիւնը . ա-
նոր համար վարը կը բացաարենք
համառօտ կերպով :

Մկրտութիւնը՝ Յարդանա-
նու մէջ սահմանադրեց . որով
հետեւ ինքն Յիսուս Վալիլեաց-
ւոց Նազարէթէն հոն դալով
երբ որ երսուն տարու էր՝ մկրտ-
վեցաւ Յօհաննէսէն . չէ թէ
մաքրութեան կարօտ էր՝ որ ամէ-
նուն սրբացուցիչն է , այլ՝ որ իր
անձառե ի խոնարհութեամբը
հաստատէ մկրտութեան խոր-
հուրդը :

Վրոշմին խորհուրդը իր բեր-
նովը աւանդեց յարութիւն առ-
նելէն ետքը՝ ըսելով թէ՝ « Այլ
առ ջիք զգօրութիւն ՚ի հասանիլ
Հոգւոյն սրբոյ ՚ի վերայ ձեր , և
եղիջիք ինձ վկայք Այրուսաղէմ »
(Վրժ . ա . 8) :

Արդարեւ գրոշմով կը դորա-
նանք՝ Քրիստոսի ճշմարիտ հա-
ւասքը համարձակ դաւանելու
ամէնուն առջին, և Հոգւոյն
որբոյ շնորհքը անով կ'իջնայ հո-
գիներնուս մէջ՝ անջնջելի կենիքի
մը պէս :

Այս խորհուրդը պէտք է
տալ անմիջապէս մկրտութենէն
ետքը՝ վրան ատեն չանցունելով.
որովհետեւ մեր կենարար Յի-
սուսին վրայ Հոգւոյն որբոյ ա-
ղաւնակերպ իջումը՝ այս խոր-
հուրդը կը ցուցունէր. ըստ այ-
նքմ, թէ՛ « Այլ իբրեւ մկրտե-
ցաւ Յիսուս, եւ վազվազակի ՚ի
ջրոյ անտի. և ահա բացան նմա
եքիկինք, և ետես զՀոգին Աս-
տուծոյ՝ զի իջանէր իբրեւ զա-
ղաւնի, և գայր ՚ի վերայ նորա »
(Մատ. 7. 16) :

Հաղորդութեան սքանչելի
խորհուրդը՝ ետքի ընթրիքին մեջ
սահմանեց՝ առաջ օրհնելով հա-
ցը ու գինին , ու ետքն ալ
յայանի խօսքով ըսելով՝ « Այս
է մարմին իմ . այս է արիւն
իմ » . և այս կերպով՝ քահա-
նայագործել սպասարեց մեզի .
ըստ այնմ , թէ՛ « Օյս արաս-
ջիք առ իմոյ յիշատակի » (Վճ .
իբ . 19) :

Ապա խարութեան զարմանա-
լի խորհուրդը իր շարժարանքէն
առաջ կատարեց բացարձակ կա-
րողութեամբ՝ և իբրեւ հեղինակ
քաւութեան և թողութեան
մեզաց . ըստ այնմ , թէ՛ « Վի-
տասջիք եթէ իշխանութիւն ու-
նի որդի մարդոյ յերկրի թողուլ
զմեզս » (Վճ . թ . 6) : Աւ մե-
զաւոր կնկանն ալ կ'ըսէր՝ « Թու-

դէսալ լիցին քեզ մեզք քո ”
 (Եւր . Է . 48) :

Ու յարուժիւն առնելէն
 ետքը՝ կիրակի երեկոցին երեւե-
 լով աշակերտներուն , որ վերնա-
 տունը ժողովրդած էին , տուաւ
 անոնց այս իշխանութիւնը՝ եր-
 բոր փչեց անոնց՝ ու ըսաւ . “ Ա-
 ռեք Հոգի սուրբ ” . աս բանը
 չէր ցուցունէր Հոգւոյն սրբոյ
 պարգեւաց լրումը , որ Պէնտե-
 կոստէին օրը պիտի ընդունէին .
 այլ կատելու և արձակելու իշ-
 խանութիւնը կը ցուցնէր . ա-
 նոր համար ան խօսքէն ետքը ը-
 սաւ . “ Եթէ ումք թողուցուք
 զմեզս՝ թողեալ լիցի նոցա . եթէ
 զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի ”
 (Յօդ . Ի . 23) :

Այս գերագոյն իշխանութիւ-
 նը չէ թէ միայն Առաքեալներուն

արբւեցաւ, այլ և անոնց բոլոր
օրինաւոր յաջորդներուն ալ տա-
րածիւեցաւ. անոր համար Առա-
քելոց մէջ գլխաւոր երանելին
Պետրոս՝ Եկեղեցւոյ ամէն երէց-
ները իրեն սրատուակից և ա-
թուակից կը կոչէ ըսելով, թէ՛
«Օ երիցունս այսուհետեւ ա-
ղաչեմ իբրեւ զերիցակիցս և ըզ-
փկայս չարչարանացն Քրիստոսի,
որ և հանդերձեալ փառացն
յայտնելոց հաղորդ» (Ա. ՊԵՊ.
Ե. 1) :

Աւսուրբն Պօղոս գերերջա-
նիկ առաքեալը՝ իր գործակից
Տիտոսին արժանապատուութիւ-
նը հրատարակելով կը գրէ Աս-
րընթացիներուն՝ այսպէս. «Բայց
եթէ Տիտոսի ինչ բանք են, իմ
հաւատար է և ձեր գործակից» :

Աւսուրբն Վիոնէսիոս՝ Տիւ-

մոթէոսին թուղթ մը կը գրէ ա-
սանկ սկըսելով . « Ի քահանայէ
'Վիոնէսիոսէ՝ առ քահանայակի-
ցըդ մեր Տիմոթէոս » :

Ասկէ կը հասկըցիլի որ , ան որ
իր ընտրեալներուն պատիւ և
իշխանութիւն սրարգեւեց , նոյն
պատիւը և իշխանութիւնը ա-
նոնց յաջորդներուն ալ շնորհեց .
ու այս բանը՝ իր աղօթքին մէջը
յայտնի ըրաւ՝ երբոր Հօր Ա-
տուծոյ կը աղաչէր ըսելով .
« Այլ ոչ վասն նոցա միայն աղա-
չեմ , այլ և վասն ամենայն հա-
ւատացելոց բանիւն նոցա յիս »
(Թ՛հ . ԺԷ . 20) :

Այս բարձրագոյն իշխանու-
թիւնը՝ Յիսուս փրկիչն մեր իր
կամաւոր չարչարանքէն առաջ
խօսք տրվաւ տալու՝ Առաքելոց
գլխաւոր երանելի Պետրոսին .

ու ասով՝ չէ թէ անոր դիտաւու
 ըուծեան բարձր պատիւը միայն
 յայտնի կ'ընէր, այլ անոր ճշշ
 մարիտ դաւանութեանը իբրև
 փոխարէն մը պարզեւելու պէս՝
 առաջուց կ'իմացընէր անոր սա
 սքանչելի խորհուրդն ալ. այսին
 քըն ըսել կ'ուզէր մեր Տէրը,
 թէ՛ սով Պետրոս՝ որ առաքելոց
 մէջ նախասպատիւ ես, դուն որ՝
 իմ բոլոր աշակերտներուս կող
 մանէ՛ Հօր Աստուծոյ յայտնելու
 վը՛ դիտ Աստուած և որդի Աս
 տուծոյ դաւանեցար՝ « Դու ես
 Քրիստոսն որդի Աստուծոյ կեն
 դանուց » ըսելովդ, ահա՛ ատոր
 փոխարէն հիմակվընէ կը յայտ
 նեմ քեզի այս խորհուրդը, որ
 միայն իմ Աստուածութեանս
 յատուկ բան մըն է. « Օ՛ր սով
 կարէ թողուլ զմեզս, եթէ ոչ

միայն Աստուած ” . ահա այս բանը առաջուց յայտնեմքեզի . բայց չարչարանքէս ու թաղուելէս ու յարութիւն առնելէս ետքը՝ չէ թէ միայն քեզի պիտի պարգեւեմ , այլ բոլոր քու աշակերտակիցդ եղող Առաքեալներուս ալ հաւասար պիտի պարգեւեմ յայտնապէս : “ Տայքեզ զփականս արքայութեան երկնից , զոր միանգամ կապեցես յերկրի , եղիցի կապեալ յերկինս . և զոր արձակեցես յերկրի , եղիցի արձակեալ յերկինս ” (Ասք . ԺԳ . 19) :

Այս բանին վրայօք կը երգէ Եկեղեցին , “ Ար խոստացար տալ զփականս արքայութեան երկնից երանելուն Պետրոսի ” :

Ու նոր կտակարանաց Տեսուածութեան մէջ (Հատոր . Բ .

յերես . 22) . այս բնաբանին վրայօք ասանկ գրված է : « Պետրոս մեծապէս գովելի գաաւ , և ընկալաւ զանվրէսլ խոստումն մեծի մասին սրահելոյ նմա 'ի Տեառնէ » :

Այս մտքին վրայ են բոլոր մեկնիչները՝ և ճշմարտութեան վարդապետները :

Բայց տեսնանք ի՞նչ պատճառ կայ , որ իր չարչարութիւնն առանց կը խոստանայ մեր Տէրը այս իշխանութիւնը տալու , և չարչարութիւնն ու յարութիւնն առնելէն ետքը կուտայ իր ամէն աշակերտներուն , վասն զի թէպէտ զանոնք ընտրելէն ետքը՝ տուանանոնց՝ գեւեր հանելու իշխանութիւն և զօրութիւն , ու ամէն հիւանդութիւնները բժշկելու կարողութիւն , բայց չի

տուաւ կապելու և արձակելու
 իշխանութիւն, որովհետեւ տա-
 կաւին չարչարված չէր, և պատ-
 ճառն այս էր որ՝ ապաշխարու-
 թեան փրկարար խորհուրդը՝
 Քրիստոսի Տեառն մերոյ չարչա-
 րանացը յատուկ պատուղն է, ո-
 ղովհետեւ մեր ապաշխարութիւ-
 նը միայն անով հաճոյ և ընդու-
 նելի կ'ըլլայ Հօր Աստուծոյ առ-
 ջեւը ։

Անոր համար խաչին վրայէն
 թողութիւն խնդրելով զինքը
 խաչը հանողներուն համար՝ թո-
 ղութեան յոյս կը պարգեւէր ա-
 պաշխարող մեղաւորներուն, զի
 ճշմարիտ Արդի Աստուծոյ ըլլա-
 լովը՝ Հօր Աստուծոյ կը գոչէր,
 և մեզի ալ միջնորդ հաշտու-
 թեան ըլլալովը՝ կ'աղաչէր անոր,
 որ ներէ մեր մեղքերը ։

Աւստի շատ պատշաճաւ որ եղաւ՝ այս իշխանութիւնը յարութիւն առնելէն ետքը տալը, վասն զի մենք՝ մեր զղջմանը և ապաշխարութեանը միջնորդ բռնելով մեր կենարար Յիսուսին փրկագործ չարչարանքները՝ մահը՝ ու թաղումը՝ այնպէս կ'ընդունինք Աստուածային ներդրութիւնը, ինչպէս որ ինքն ալ ասանկ քարոզեց. « Պարտ էր չարչարիլ Քրիստոսի, և յանել ՚ի մեռելոց յաւուր երրորդի, և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս » (ՂԳ. 1. իդ. 46) :

Այս դիտաւորութեան կը նայի սուրբ Ալեգղեցւոյ սա երգըն ալ. « Օրհնեմք դբեզ անրս կիզքն Հայր Արդւոյդ միածնի,

զոր առաքեցեր ՚ի դարձումն մա-
լորեալ ոչխարին . դարձն է զմեզ
՚ի մեզաց՝ Արդւոյ քո չարչարա-
նօք ։

Առբբ գիրքը քննողներուն՝
յայտնի է այս ամէն ըսվածները ։

Վերջին օճման խորհուրդին
ալ՝ Քրիստոսէ սահմանված ըւ-
լալուն վրայ տարակոյս չունինք .
վասն զի Առաքեալները՝ անոր
փրկագործ տնօրէնութեան ատե-
նը կը գործածէին այս խորհուր-
դը ։

Աւրեմն յայտնի կ'երեւայ՝ որ
մեր Տէր Յիսուսը սահմանեց
այս խորհուրդը՝ երբոր կը սորվե-
ցընէր կ'ապսպրէր անոնց՝ իրենց
սլաշտօնը՝ զօրութիւններ ու իշ-
խանութիւններ տալով անոնց .
ինչպէս որ ըսաւ՝ « Օհիւանդս
բժշկեցէք » (Մատ . Ժ . 8) ։

Թեպէտ ասով չի հասկըցիլի՛ր՝
 Թէ ի՛նչ կերպով կը կատարէին
 այս խորհուրդը՝ ծանր հիւանդ-
 ներու վրայ, բայց Վարկաս սըը
 բազան Աւետարանիչը՝ ասանկ
 կերպ մը ցուցունելով՝ կ'ըսէ
 յայտնի. « Ալ օճանէին իւղով
 զբազում հիւանդս, և բժշկէին
 զնոսա » (Մարի . զ . 13) :

Ատքը եղբայր Տեառն Յակօբ
 Առաքեալին ձեռքովը հրատա-
 րակվելով՝ մտաւ Ակեղեցիներ-
 րուն մէջ, ու Ակեղեցւոյ սրբա-
 ըրար խորհուրդներուն կարգը
 անցաւ :

Չեռնադրու թեան սուրբ
 կարգը յատկապէս Քրիստոսէն
 սահմանվեցաւ, որ անոր հոգե-
 ւոր իշխանութիւն կը տրվի՝ Ա-
 կեղեցական սրաշտամունքները օ-
 թինապէս կատարելու համար,

և աւետարանական քարոզութեամբ հաւատացեալները հովուելու համար :

Այս խորհուրդը՝ Քրիստոսէն սահմանվեցաւ, որ ճշմարիտ Քահանայապետ ըլլալով՝ իր աշակերտները նախ՝ Առաքելական պաշտօնի մէջ աստիճանէ յաստիճան հանելով, ետքը համբարձման օրը տարաւ զանոնք Չիթենեաց լեռը, որ Բեթանիա գիւղին մօտն է, ու վեր վերցընելով իր Աստուածային ձեռքերը՝ օրհնեց զանոնք, տալով անոնց զամէն Աստուածային շնորհները, և զամէն բարձր աստիճանները, որ անոնք ալ նոյն կերպով իրենց յաջորդներուն մատակարարեն այն պաշտօնին շնորհքը : « Ահան զնոսա մինչեւ ՚ի Բեթանիա, և ամբարձեալ

զձեռս իւր օրհնեաց զնոսս »
 (Ղ. 1. իգ. 50) :

Աւստի Առաքեալը Տիմոթէոսին կը գրէ ասանկ : « Այն փայտ առներ զչնորհացդ՝ որ ՚ի քեզ են, որ տուաւ քեզ մարդարէութեամբ ՚ի ձեռնադրութեանէ երիցութեան » (Ա. ՏԺՏ. դ. 14) :

Պատկը Այլեղեցւոյ խորհուրդ մըն է՝ որ արարչագործութեան ատենը Աստուծմէ սահմանելէ ցաւ մեր նախածնողաց վրայ, վասն զի իր Աստուածային կամօք ամուսնական անբաժանելի միաւորութեամբ կապեց զանոնք իրարու, որ մարդկային սեռը զաւկրներով աճին ու շատնան :

Աւստի Ադամ երբ որ քնանալու թմրութենէ մը արթնցած՝ տեսաւ իր քովը իր կնիկը Աւան

բուն իրեն նման, բնականապէս
 հաւնեցաւ անոր և իր մարմնոյն
 մէկ կտորը ըլլալովը՝ սիրելով զա-
 նիկայ, Մատուծոյ ազգեցու-
 թեամբը սկըսաւ մարգարէանալ,
 ու իբր թէ Մատուծոյ կողմանէ՝
 իրեն ապագայ զաւկըններուն կ'ը-
 սէ. « Մյս այժմիկ սկըր յսակե-
 րաց իմոց, և մարմինն ՚ի մարմնոց
 իմմէ. սա կոչեացի կին, զի յառ-
 նէ իւրմէ առաւ. վասն այնորիկ
 թողցէ այր զհայր իւր և զմայր
 իւր, և երթիցէ զհետ կնոջ իւ-
 րոյ, և եղիցին երկուքն ՚ի մար-
 մին մի » (Օճնդ. բ. 23) :

Աւերիկ կնկան այս սուրբ
 ամուսնութիւնը՝ Տէրն մեր Յի-
 սուս զօրաւոր խօսքով կրկին հաս-
 տատեց՝ անբաժանելի միաւորու-
 թեամբ իրարու հետ կապլամծ
 ըլլալնին վճռելու համար .

« Այդա ուրեմն ոչ ե՛ն երկու՝ այլ մի մարմին . արդ՝ զոր Աստուած զուգեաց , մարդ մի մեկնեացէ » (Սաք . ժԹ . 6) :

Աշխարհիս սկիզբէն Աստուծոյ ձեռքով սահմանված այս ամուսնական սուրբ միաւորութիւնը՝ սուրբ Ակեղեցւոյ խորհուրդներուն կարգը անցընելու զելով մեր Տէրը , Վալիլեացւոյ կանաքաղքին մէջ հարսնիք մը գնաց , որ իր Աստուածային մեծ վայելչութեամբը մեծ ցուցած ըլլայ այս խորհուրդը , և մեր բանական սեռին օրինաւոր ածմանը համար հաստատէ (Ծժ . ր . 1) :

Սե՛ծ խորհուրդ է՝ Վրբիատունէից այս ամուսնութեան խորհուրդը , որ զՎրբիատոս և զԱկեղեցին կը ցուցունէ՝ ինչպէս որ

առաքեալը կ'ըսէ՝ (Ն. Գ. Ե. 32)։

Այսինքն կը նշանակէ Քրիստոսոսի ու Ակեղեցւոյ մէջ տեղ եղած այն հոգեւոր միաւորութիւնը, վասն զի Ակեղեցին սուրբ կոյս՝ և անարատ հարս մըն է, և իր անմահ և երկնաւոր փեսան՝ Քրիստոս է, որ զանիկայ իր մարմնոյն պէս կը սիրէ, և իր բարեբար խնամքներովը կը սնուցանէ, և իր անմահ մարմնոյ և արեան կենդանացուցիչ խորհուրդովը կը կերակրէ, ու կը զարդարէ զանազան պարզեւնեքով ու փառքերով (Ն. Գ. Ե. 29)։

Ասանկ կը պարտաւորի ամէն մարդ իր մարմնոյն պէս սիրել իր օրինաւոր կիներ, և հոգ տանիլ անոր վրայ, ամուսնական իրաւունքով խնամել զանիկայ, և ներել անոր բնական տկարու-

Թեանը . ու կինն ալ պէտք է որ
մեծարէ իր էրիկը՝ ամէն կերպով
անոր հնազանդ ըլլալով , ու վախ
նալով իր էրիկնէն՝ իբր թէ խը
նամած ու Տէրոջմէ մը վախնալու
պէս (Եփե . Ե . 33) :

Սե՛ծ է այս խորհուրդը՝ Քրիստոսի
չնորհական օրինաց մէջ .
որովհետեւ Քրիստոնէաց էրիկ
կնկան՝ իրարու հետ ունեցած ա
մուսնական միութիւնն է որ՝
կ'ամէցընէ հաւատացեալները ,
ու Մատուծոյ շնորհունակ որդի
ներ կը շացընէ (Վաչ . գ . 27) :

Ինքնիրեն ալ բնականապէս
մեծ է և սքանչելի է այս ամուս
նութեան խորհուրդը . որովհե
տեւ երկու իրարու անձանօթ
անձեր՝ սիրոյ պինդ կապով մը ա
նանկ կը կապվին իրարու հետ ,
որ մինչեւ անդամ կը մուսնան ի-

բենց աղգահանները՝ բարեկամները՝ մօտիկ ճանչփորները՝ ու անոր զարմանալու բան է, իրենց ճնողքն ալ կը մոռնան :

Գաղտնաճածուկ ոգեխառնու թիւն մըն է այս՝ մեր բնութեանը մէջ պահված, և վերին արարչական տեսչութեանը մէկ մեծ խորհուրդն է, որով մարդոց ճնունդը կ'աճի օրինաւոր միաւորութեամբ մը :

Արդ՝ թէ որ կնիկ մը կամ այր մարդ մը կը խտտորի կը ծռի այս օրինաւոր ամուսնութեան մէջ՝ որ Տէր Ատուած սահմանած է, կամ թէ կանոնաւոր ամուսնութենէ դուրս՝ ազատ ազատի հետ պղծութիւն կ'ընեն, և կամ թէ մէկը օտար կարգը վաճի մը հետ դէշութիւն կ'ընէ, անանկները շուն ու պոռնիկ կ'ըստին. մանաւ

ւանդ թէ՛ ամուսնական հաւա-
 տարմու թիւնը աւրող, և Մտա-
 ոււածային բարեկարգութեան
 հակառակ. որով չէ՛ թէ՛ միայն
 բարի մարդոց կ'անարգւիին ու ե-
 րեսէ՛ կ'իյնան, այլ Մտուածային
 շնորհքներէն ու փառքերէն ալ
 կը զրկւիին՝ Մտուածոց ահեղ դա-
 տաստանին դատապարտութեա-
 նը տակ իյնալով: «Պատուական
 է ամուսնութիւն և սուրբ են
 անկողինք. բայց զշունս և զսու-
 նիկս դատի Մտուած» (Եբր.
 Ժգ. 4):



Գ Լ ՈՒ Խ Ժ Գ .

Խորհուրդներուն զանազանութիւնը :

Եկեղեցւոյ խորհուրդներէն
 ոմանք հարկաւոր են ամէնուն ,
 ու ոմանք հարկաւոր չեն ամէ-
 նուն . ոմանք կը կրկնըլլին , ոմանք
 չեն կրկնըլլիր . որոնք պէտք է որ
 գիտնանք ու ճանչնանք :

Սկստու թիւնը ամէնուն հար-
 կաւոր է՝ սկզբնական մեղքէն ա-
 զատելու համար , ու Աստուա-
 ծային հանդերձեալ փառքին
 ժառանգաւոր ըլլալու համար :

Ասիկայ չկրկնըլլիր . որովհե-
 տեւ մկրտութեան խորհուրդը՝
 Քրիստոսի Տեառն մերոյ կենսա-
 ձիր մահուանը յատուկ օրինա-

կրն է .

Աւստի մկրտութեան ատեն՝ երախայն երեք անգամ ջուրը ընկրողմե շնիա՝ մեր փրկչին երեք օր թաղված մնալը կը նշանակէ . վաստն զի մկրտութեան խորհուրդով՝ Քրիստոսին խաչը ելելուն և մեռնելուն կցորդ կ'ըլլանք, և անով՝ իր փառքին ալ ժառանգակից :

Արեմն ինչպէս որ անհնար է՝ որ Քրիստոս նորէն խաչվի ու մեռնի, անանկ ալ՝ անգամ մը մկրտվողին անհնար է կրկին մը կրրավիլ, որ մտածելն ալ ծանր մեղք է :

« Աթէ ոչ գիտէք, զի որ միանգամ մկրտեցայք ՚ի Քրիստոս Յիսուս՝ ՚ի մահ անդր նորա մկրտեցայք . թաղեցայք ընդ նմին մը կրրաութեամբն ՚ի մահ, և այլն »

Հոգւոյն . Գ . 3) . և (Լեւի . Գ . 4) :

Վրոշմը հարկաւոր է ամէն մկրտեալներուն , որ զօրանան Հոգւոյն սրբոյ շնորհքներով , ու սատանային հնարքներուն դէմ արիանան . և ա՛ս ալ անկրկնելի է . « Քանզի անզեղջ են շնորհք և կոչու մե Մտուծոյ » (Հոգւոյն . Ժա . 29) :

Յիսուսի փրկչին մերոյ կենարար մարմնոյ և արեան հաղորդութեան խորհուրդը՝ կատարեալ զղջմամբ մեղքերէն հրաժարլած ամէն Քրիստոնէից հարկաւոր է՝ Յիսուսի Քրիստոսի սրբութեանը հաղորդակից ըլլալու համար . և ասիկայ կրկնելու խորհուրդ է . « Քանիցս անգամ թէ ուսիցէք զհացս զայս , և զբաժակս ըմպիցէք , զմահ Տեառն սպամեցէք , մինչեւ ե .

կեսցէ նա : (Ս . Կրճ . Ժա . 26) :

Այդաշխարու թիւնը հարկաւոր է ներդործական մեղաց մէջ ամէն ինկողներուն , որ սրտով զղջան . ու խղճմտանքով ետ կենան մեղքերէ , ու բարի գործքերու հետեւին , ու քահանային առջեւը կատարեալ խոստովանութեամբ՝ հասնին Աստուածային ներողութեան . այս խորհուրդն ալ կրկնելի է : « Տէր՝ քանիցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ՝ և թողից նմա , մինչեւ ցեօթն անգամ : Ասէ ցընա Յիսուս , ոչ ասեմ քեզ թէ մինչեւ ցեօթն անգամ , այլ մինչեւ ցեօթանասնեկին եօթն » (Մատ . ԺԲ . 21) :

Վերջին օճման խորհուրդը՝ որ կարգաւորներուն աղօթքովք կը կատարվի , հարկաւոր է ծանր

հիւանդներու վրայ՝ ցաւերուն
 թեթեւութեանը ու բժշկու-
 թեանը համար, յանցանքներուն
 ներողութեանը համար, և հո-
 գիներուն գիւրաւ Աստուծոյ
 տեսութեանը հասնելուն համար,
 որ է մէկ հատիկ վախճան երա-
 նական :

Այս խորհուրդը այնչափ շատ
 հարկաւոր չէ ամէնուն՝ այն միւս
 խորհուրդներուն պէս, որ միայն
 անոնցմով կ'ըլլայ հոգւոց փրկու-
 թիւնը, ու Աստուածային երա-
 նութեան և յաւիտենական փա-
 ռայ ժառանգութիւնը :

Այս խորհուրդն ալ կրկնելի
 է, և շատ ծանր հիւանդներուն
 պէտք է՝ թէ որ ժամանակը՝ տե-
 ղը՝ և ուրիշ սպառազաները նե-
 րեն :

Առաքեալը ասանկ կը պատ-

ուիրէ . « Հիւանդանայցէ որ ՚ի
 ձէնջ՝ կոչեացէ զերիցունա Այկե-
 ղեցւոյն , և արասցեն ՚ի վերայ
 նորա աղօթս . օծցեն իւղով յա-
 նուն Տեառն , և աղօթքն հաւա-
 տովք փրկեացեն զաշխատեալն .
 և յարուոցէ զնա տէր , և եթէ
 մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի
 նմա » (Աւիւ . Յակ . ե . 14) :

Թիւ որ ձեզնէ մէկը փասա-
 կար հիւանդութիւնով հիւընդ-
 նայ կ'ըսէ՝ որ անկէ բժիշկները
 ձեռք քաշեն , պէտք է հոգեւոր
 բժիշկներ կանչել , որոնք կարօտ
 չեն խտերու և արմատներու
 լեզի գեղերուն , այլ անոնց բը-
 ժըշկութեան ազգու գեղը՝ ջեր-
 մեռանդ գիտաւորութեամբ և
 զած աղօթքներն ու խնդրուածք-
 ներն են . ինչպէս որ կը վկայէ
 մեր Ասորգիս շնորհալին . « Օճըշ-

մարիտ բժիշկն Յիսուս ՚ի կարիս
հիւանդին խոնարհեցուցանեն ։

Իրան իրան՝ ինչ սքանչելի զօ-
րութիւն ունի արժանաւոր մաք-
րասիրտ հոգեւոր մարդոց աղօթ-
քը . « Օ ՚ի աղօթքն հաւատովք՝
(կ'ըսէ սուաքեալը) վրկեցեն
զաշխատեալն , և յարուսցէ զնա
Տէր ։ »

Այս բնաբանին մէջ՝ սուրբ
վարդապետն մեր շնորհալին Սար-
գիս բացայայտ կ'ըսէ , « Այժմէ ոչ
իւղն ինչ տայր զառողջութիւն
հիւանդին . այլ՝ անուն Տեառն ։ »

Մանաւանդ որ՝ խորհուրդներ
բուն հեղինակը Յիսուս՝ ասանկ
աւանդեց այս խորհուրդը Առա-
քեալներուն՝ ըսելով թէ , « Ի
վերայ հիւանդաց ձեռս գիցեն
և բժշկեցին ։ » (Մարկ . ԺԷ . 18) :

Աւստի սրբազան Առաքեալը

ներքը երբեմն Տէր Յիսուսի ա-
նունովը կը բժշկէին հիւանդնե-
րը, ու երբեմն ձեռք դնելով զը-
րանին: « Զանուն Յիսուսի Քը-
րիստոսի նազովը եցւոյ արի և
դնա՞ն ըսին ՚ի ծնէ կաղին (Պօղ .
գ . 6) : « Լշւ կղեւ հօրն Պոպ-
ղեայ ՚ի ջերմն և յախտ թանչից
հիւանդանալ՝ դնել, առ որ մը-
տեալ Պօղոս՝ և կացեալ յաղօ-
թըս՝ եդ զձեռն և բժշկեաց ըզ-
նա » (Պօղ . իբ . 8) :

Իսկ Լուսաբեալներէն ոմանք
խորհելով որ՝ Իսրայէլացւոց ազ-
գին մէջ մարդարէներուն ատե-
նէն սովորութիւն կար սուրբ
իւղ ունենալու՝ և յարգանքով
պահելու, որ անով կ'օժէին Լու-
սուածոց նուիրակները, և այն
իւղերուն մէջ անուշահոտ և
սուղ իւղեր ալ կը գանձուէր. (Ա.

Թ՝ Գ . ԺԳ : Ս՝ Դ՝ . ՃԸ . 18 : Յ՝ Կ .
ԺԸ . 3) :

Մտոր համար երբեմն ալ իւր
ղով կ'օժէին հիւանդները , և ա-
նանկ կը բժշկէին . բայց զօրու-
թիւնը անոնց աղօթքներով , և
Յիսուս Քրիստոսի անուամբ
կ'ըլլար :

Աւստի հիւանդներուն խիստ
կարեւոր է սրբակրօն կարգաւո-
րաց աղօթքը՝ ձեռք դնելով վրա-
նին , ինչպէս որ մեր Տէր Յի-
սուսն ալ վճռելով պատուիրեց
« Չեռս դնել 'ի վերայ հիւան-
դաց » :

Բժշկութեան շնորհքը՝ որ
պարգևւ կ'ըլլայ հաւատացեալ
հիւանդներուն , ոչ ձեռք դրնու-
ղինն է , ու ոչ ալ աղօթողին ,
այլ Յիսուս Քրիստոս երկնաւոր
բժշկապետին :

Իսկ սրաչտօնասէր և սրբակրօն
քահանաները նոյն շնորհքին սպա-
սաւորներ են, որ իրենց արժանա-
հայց աղօթքովը ու խնդրութեամբ
քովը արժանաւոր և ընդունակ
շնորհաց կ'ընեն հաւատացեալը :

Ուրեմն այս բժշկութեան
խորհուրդը՝ անշուշտ կրնայ կու-
տարիլի հիւանդներուն վրայ՝
սուրբ խաչի տեառնագրու-
թեամբ ալ՝ աղօթքով ալ, որ
յաճախ ընել կուտան մեր ջեր-
մեռանդ և հոգեւէր աղգը՝ ի-
րենց վտանգաւոր հիւանդնե-
րու վրայ, քահանայ կանչելով՝
և հաւատքով՝ աղօթք և բժշկու-
թեան աւետարանի ընթերց-
մունք խնդրելով : և յատկապէս
աս է՝ այս խորհուրդին վայելուչ
կերպով կատարու մը՝ Այկեղեցւոյ
առաջին դարերէն ՚ի վեր մեծար-

ված . որ սա բանին վրայ իրա
 ւամբ կը գրէ Հայր Վարդիէ՛լ
 Պօղոսի թղթոց մեկնու թեան
 մէջ՝ (Հատոր . Ե . թղթահամար
 910) : “ Այլ երբեմն գնելով ըզ
 ձեռն ՚ի վերայ ակտայելոց որ
 պէս Տէրն խոստացաւ (Ա՛ռի՛ .
 Ժզ . 18) :

Ալ բազում անգամ աղօթիւք
 և անառնագրու թեամբ խաչի .
 որ է արարողու թիւն ՚ի կիր ար
 կեալ յառաջին գարուց Ակե
 ղեցւոյ ” :

Տէ՛ս որ՝ Յիսուսի ամենահը
 նար զօրու թիւնը՝ կարող է Պօ
 ղոս առաքեալին մահրամայնի
 ալ հիւանդներու վրայ հրաշք
 ընելու . նոյն հիւանդին և անոր
 վրայ աղօթք ընողին հաւատքին
 նայելով . ինչպէս որ գրված է
 գործոցին մէջ՝ (ԺԹ . 11) :

“ Այլ զօրութիւնս ոչ սակաւ
 ւրս առնէր Աստուած ՚ի ձեռն
 Պօղոսի . մինչ զի և ՚ի հիւանդս
 տանիլ ՚ի քրտանէ նորա թաշկի
 նակս կամ վարչամակս , և մեր
 իել ՚ի նոցանէ ախտիցն , և այ-
 սոց չարաց ելանել ” :

Չեռնադրութեան խորհուր-
 դը՝ որ քահանայական կարգին
 եօթն աստիճան իշխանութիւնն
 է . հարկաւոր է անոնց համար ,
 որ կոչված ու ընտրված են սրբ-
 բարար խորհուրդներուն սպա-
 սաւորութեանը և պաշտօնին
 համար , և հոգեւոր հովուու-
 թեան համար . որով Աստուածա-
 յին սուրբ խորհուրդներուն հո-
 գեւոր անտես կը կարգի ձեռ-
 նադրեալը , ու արթուն և քաջ
 հովիւ կ'ըլլայ , որ ճշմարիտ հով-
 ուսպետին Քրիստոսի բանաւոր

հրաղ Քրիստոնէական ողջամիտ
վարդապետութեամբ խնամէ, և
բարի վարուց առաջնորդէ զա-
նոնք :

Այս խորհուրդն ալ շի կրթի-
նը վիբ նոյն մարդուն վրայ, որ
անգամ մը բնդուներ է այս շք-
նորհքը :

«Մի անխոյթ առներ զշնորհա-
ցըդ՝ որ ՚ի քեզ են, որ տուաւ
քեզ մարգարէութեամբ ՚ի ձեռ-
նադրութենէ երիցութեան .
յսցդ խորհեաց և ՚ի դոյն կան-
խեսցիք . զի քո յառաջադիմու-
թիւնդ ամենեցուն յայտնի լի-
ցի » (Ա. ՏԻՏ. Դ. 14) :

Վուզէի հոս՝ քահանայու-
թեան այս հոգեւոր բարձր առ-
տիճանին հարկաւոր և օգտակար
զանազան խրատներ ու յորդա-
բանքներ քաղել Աստուածային

սրբազան գիրքերէն, ու սուրբ հայրերուն նուիրել անմահ կենդանութեան ու զեցոյցի մը պէս, բայց աղէկ նկատեր եմ, որ մեր սրբազան Աերսէս շնորհալի հայրապետին Աստուածաշնորհ և վրսեմ խրատարանութիւնները և յորդորակները՝ զոր նուիրած է Ապիսկոսոսաց և Քահանայից սրբազան դասուն, շատ ազդու և բաւական խրատներ են, և ամէն մէկ աստիճանաւ որներու յարմար և վայելուչ յորդորակներ են :

Արեթէ աստիճանաւ որներէն մէկը աչալուրջ մտք կարգայ զանոնք, և իր գործքերը նոյն Աստուածաշնորհ խօսքերուն յարմար ցընէ, ի հարկէ հրեշտակաց անարատութիւնը կ'ըստանայ՝ անվերէս ու անդատաստարտ մնալով իր պաշտօնին մէջ :

Աւստի նորին այս հողերոյս
 խօսքերուն վրայ՝ մեր քովէն կըր-
 կին յորդորանքներ ու խրատներ
 եւ վերջընելը անպատշաճ սեպելով
 Պօղոս սրբազան Առաքելոյն միայն
 այն խօսքը ձեռք առինք, որով
 Ահեղեցւոյ պաշտօնասէր հողա-
 բարձուներուն երկու տեսակ
 վարձքի արժանաւոր ըլլալնին կը
 յայտնելի : « Ար բարւոք վերա-
 կացու լինին երիցունք, կրկին
 պատուոյ արժանի եղիցին, մանա-
 լանդ որ աշխատիցին բանիւ և
 վարդապետութեամբ » (Ա. ՏԺՏ.
 Ե. 17) :

Պսակը Ահեղեցւոյ խորհուրդ
 մըն է, որով այր և կին երկու կող-
 մէն սրտի հաճութեամբ և յօժար
 կամքով կը կապվին իրարու հետ
 օրինաւոր և սուրբ ամուսնու
 թեան համար :

Մտիկայ ազատաբար հարկաւոր է ամէնուն , աշխարհիս մէջ բնականապէս վարվելու համար . բայց պէտք է Մտուածային վճռով անքակտելի մնալ կենակցութեան անարատ սիրոյն մէջ , և երկուքը իբրեւ մէկ մարմին՝ միաւորիլ իրարու հետ բարոյական և օրինաւոր միութեամբ , զաւկրներ ծնանիլ , իրարու օգնականութեամբ մեծցընել զանոնք , բարի վարուց և Մտուածապաշտութեան մէջ կրթել , և զանազան առարքինութեան օրինակ ըլլալով իրենց զաւկրներուն , որ այս բանը անժխտելի և հարկաւոր պարտք ժն է հայրերուն և մայրերուն :

Ուստի ամուսնական և օրինաւոր միաւորութիւն՝ այր և կնոջ իրարու հետ մէյտեղիլը բարի է .

որ անսնցմէ՝ մարդոց սերունդին
չարունակ աճմանը համար զաւ-
կըններ կը բուսնին : « Այ է բար-
ւոր մարդոյդ միայն լինել . ա-
բասցուք դմա օգնական ըստ դը-
մա (Օճնդ . բ . 18) :

Օ ի եթէ ամուսնանայցես ,
նչ մեղար , և եթէ ամուսնանայ-
ցէ կոյսն , նչ մեղաւ . բայց նե-
ղութիւն մարմնոյ ունիցին այն-
պիսիքն , այլ ես խնայեցի ՚ի ձեզ »
(Ս . կրդն . է . 28) :

Երկրորդաբար ամէնուն ալ
հարկաւոր է բնականապէս՝ այս
ամուսնութիւնը , որ չըլլայ թէ
պոռնկութեան չար ատօսից մէջ
իյնան . զի ան որ չկրնար օղջա-
խոհութեամբ յաղթել իր ցան-
կութեան անօթի բաղձանքները ,
թող զսպէ՛ ինքըզինքը՝ օրինաւոր
ամուսնութեամբ : « Այց վասն

սրտնկու թեան իւրաքանչիւր որ
զիւր կինն կապցի . և իւրաքանչիւր
որ կինն՝ զիւր այր կապցի ” (Ա .
Կրն . Է . 2) :

Այս խորհուրդն ալ կրնայ
կրկնելիլ ամուսնացեալներուն
վրայ՝ թէ որ երկուքին մէկը մեռ-
նի . վասն զի էրիկ կնկան այս
ամուսնական կապը՝ անկարելի է
որ ուրիշ բանով մը քակվի , բայց
միայն երկուքէն մէկուն մեռնե-
լովը : “ Քանզի կինն առնակին ՚ի
կենդանի այր իւր կապեալ կայ
օրինօք . իսկ եթէ մեռցի այրն ,
արձակեալ է յօրինաց առն : Այ-
սա ուրեմն , մինչ կենդանի է
այրն , շուն կոչի՝ եթէ լինիցի ա-
ռնն այլում . և եթէ մեռցի այ-
րն՝ ազատ է յօրինացն՝ չհամա-
րեալ շուն՝ եթէ լինիցի առն այ-
լում ” (Հովն . Է . 2 . 3) :

Ասկէ ՚ի զառ՝ կարգը վաճնէրը
ամուսնական պարտքերնին իրա-
րու վճարելու պարտքիան են
մշտնջենապէս . որովհետեւ ա-
մուսնական օրինօք իրարու իշ-
խանութեան տակ են , և կը տի-
րեն իրարու վրայ . ու ազատ չեն ,
այլ իրարու ծառայ են՝ որչափ ա-
տեն որ կը տիրէ անսոց վրայ ա-
մուսնական միութեան օրէնքը
(Ե . Կորն . Է . 3 . 4) :

Յօժար կամքով կը կապվին ի-
րարու հետ՝ ամուսնանալու ա-
տեննին , և ակամայ կը պարտա-
ւորին իրարու տկարութեանը
օգնել՝ աշխարհիս զանազան բեր-
մունքներուն մէջ :

Թէ որ զաւակներ ծնանին ,
չատ տառապանքներ ու կերպ
կերպ ցաւեր . թէ որ զաւկի մահ
պատահի , լաց ու սուգ և տրտ-

մու թիւն՝ կ'այրէ կը լափէ սրբ-
տերնին : թէ որ անձնու նդ ըլլան,
նրչափ հոգ ու ցաւ կ'ըլլայ իրենց՝
որ այն ամուսնական վիճակին մէջ
անմխիթար մնացին :

Թէ որ շատ զաւկրներ ունե-
նան, նրչափ աշխատանք ու հոգ
պէտք է, որ զանոնք աղէկ պա-
հեն՝ մեծցընեն՝ ու կրթեն :

Թէ որ բարբերնին իրարու
յարմար պատահի, ու մէկզմէ-
կու վրայ բուղիս սրտով ցաւ ա-
կից ըլլան, ալ պէտք չէ անոնց
ուրիշ հանգստութիւն մը ու մը
խիթարութիւն մը, բայց թէ որ
ասոր հակառակ՝ պատահի որ բը-
նութիւննին չվարվող՝ բարբերնին
անզգամ՝ և վարբերնին չար ու
մտլի ըլլայ, ալ չկայ անոնց անկէ
ետեւ մխիթարութիւն մը, օրէ
օր իրարու մեռնելուն կ'ըստա-

ակն . ծովու ալիքներու պէս ան-
տանելի տառապանքներու մէջ
տակնու վրայ կ'ըլլան միշտ . և ան
տակնը արժան է որ , անոնց բը-
նակարանը՝ ցաւերու հոգերու
տուն ըսվի :

Ահա ամուսնական կեանքին
այսքան ծանրութիւններուն վը-
րայ , ու այսքան դժուար և ան-
տանելի տառապանքներուն վրայ
տարակուսելով սրբազան Առա-
քեալները՝ համարձակեցան Տէր
Յիսուսին ըսելու թէ՛ « Այժմէ
այդպէս ինչ փնտս իցէ ընդ այր
և ընդ կին՝ ըսու է շամուսնանալ »
(Մատ . ժԹ . 10) :

Անոր համար Տէրն մեր Յի-
սուս ալ վեր կը վերցընէ անոնց
միտքը աշխարհիս բաղմահոգ ալե-
կսծութիւններէն , ու Աստուծոյ
աղատարար օգնականութեանը

ապաւինել կուտայ զանոնք, որ
է կուսութեան վիճակը, որ ա-
նոր մէջ գտնուողը՝ Աստուծոյ շը-
նորհաց օգնականութեամբ լըց-
ված՝ կրնայ ուժ տալ իր անձին,
ու միայն Աստուծոյ պաշտօնը
անդրադ մտքով կատարելը մտմը
տալ, ու մտքմնայ շար բաղձանք-
ները յաղթել, ու երկնից ար-
քայութեան երանութեան պը-
սակը առնել:

Անոր համար այս պատասխա-
նը տրվաւ իր աշակերաններուն,
« Ա՛յ աւենեքեան բաւական են
այդմ բանի, այլ որոց տուեալ
է և են ներքինիք՝ որ զան-
ձինս իւրեանց արարին ներքինիս
վասն արքայութեան երկնից, որ
կարողն է տանիլ՝ տարցի » (Ամբ.
ժԹ . 11 . 21) :

Արանի անոր՝ որ յօժար սրբ.

ասով կը սրահէ այս հրեշտակային
 կրօնը՝ աշխարհիս ունայն վայել-
 մունքներէն ետ քաշվելով, ող-
 ջտխոհաւթեամբ համբերելով,
 և մարմնական գէշ ցանկութիւն-
 ներ արթնցրնող բոլոր չար բաղ-
 ձանքները իրմէն վաւերելով, ու
 իր միտքը ժամանակաւոր մըտմը-
 տութենէրէ ազատ սրահելով՝ պատ-
 րաստ կը մնայ միայն Աստուծոյ
 կամքին ծառայելու, և կենարար
 Յիսուսէն չի զատվելով միշտ ա-
 նոր հետեւելու, և միայն անոր
 ուղածները կատարելով անոր ծա-
 ռայելու. ինչպէս որ յայտնի կը
 ցուցունեն այս վկայութիւննե-
 րը: « Աշւ ամենայն որ որ եթող
 զտուն՝ կամ զեղբարս կամ զքորս
 կամ զհայր կամ զմայր՝ կամ զկին
 կամ զորդիս կամ զագարակս վա-
 արն անուան իմոյ, հարիւրասրա-

տիկ առցէ և զկեանս յաւիտենա-
կանս ժառանգեացէ (Մատ. ԺԺ.
29) :

Այլ կամիմ զձեզ անհոգս լի-
նել. զի որ անկինն է, հոգայ ըզ
Տեառն՝ թէ որպէս հաճոյ լիցի
Տեառն. և որ կանամբին է, հո-
գայ զաշխարհիս՝ թէ որպէս հա-
ճոյ լիցի կենջ իւրումն (Ա. կորն.
է. 32) :

Արդ՝ թէ որ մէկը կ'ուզէ է-
վելօք աղէկ հասկընալ կուսու-
թեան գերադանցու թիւնը, Աս-
կերերանի կուսու թեան ճառե-
րը թող կարդա՛, որ աս բանին
վրայ շատ բնդարձակ կը խօսի այն
երանելին :

Իսկ մենք՝ ամէն մէկուն կու-
չումք Աստուծոյ կը թողունք .
թէ՛ Աստուծոյ կամբովը ամուսնա-
ցած աշխարհականներունը, և

Թէ՛ Աստուծոյ պաշտամանց հոգեւոր սպասաւորութեանը համար՝ յօժար կամօք աշխրբէս հըրաժարված կոյսերունը . վասն որոյ՝ սրբազան Պօղոս Առաքեալին վկայութեամբը կը լրմնցընենք մեր խօսքը , թէ՛ « Իւրաքանչիւր որ զիւր շնորհս ունի Աստուծոյ . ոմն այսպէս և ոմն այնպէս » (Ա . Կորն . է . 7) :

Աւստի ամէն կերպով Աստուածային շնորհացը յանձնենք ինքըզինքնիս՝ անոր ներքին կոչմանը հնազանդելով : Արթուն մտքով՝ կենդանի հաւատքով՝ և մտքուր սրտով՝ պինդ բռնենք աւետարանական և առաքելական ողջամիտ վարդապետութիւնները , և սրբազան աւանդութիւնները մտքերնուս գանձարանին մէջ անկողոսպտելի գանձերու պէս

պահելով :

Այս մեծ զգուշութեամբ պահպանեցք մեր հոգին, որ չըլլայ թէ՛ չար ու խորամանկ գլխէ հանող մը՝ հոգեկորուստ խաբէութեամբ կորստեան որոգայթը ձգգէ զմեզ, մտքերնուս մէջէն յափըշտակելով բարի խորհուրդները, և Քրիստոսնէական սրբարար շնորհքները աւրելով վրանուս՝ ու պէս պէս մտացածին զրուցվածքներով մեզ զանազան ազանդներու մէջ մտորցընելով Քրիստոսնէական ճշմարիտ վարդապետութեան հակառակ :

Վասն որոյ ամէն ըսածներէս ետքը՝ Մտքեալին սա խօսքը գրել վայելուչ կը սեպեմ՝ բոլոր մտքերու զգուշութեան համար, որ հաստատ կենան այն նոյն ուղի զափստ և ճշմարիտ հաւատքին

մէջ, որն որ սորվեցանք մեր կե-
նարար Յիսուսին Աւետարանի
չնորհապարգեւ խօսքերէն, և որ
սուրբ Առաքեալներէն քարոզվե-
ցաւ, և որ նոյնը սուրբ Հայրա-
պետներէն անսխալ բացատրե-
ցաւ :

“Օգոյշ լերուք՝ մի որ իցէ՝
որ զձեզ կողոպտիցէ ճարտարմը
տուժեամբ և սնտաի խարէու-
թեամբ, որք ըստ մարդկան ա-
ւանդութեան՝ և ըստ տարերց
աշխարհիս, և ոչ ըստ Յիսուսի
Քրիստոսի ” (ԱՊՂԹ . Բ . 8) :



Die 2. Art ist ein weißer Stein
 welcher in den Gängen
 der Gänge zu finden ist
 und in den Gängen
 der Gänge zu finden ist
 und in den Gängen
 der Gänge zu finden ist

Die 3. Art ist ein weißer Stein
 welcher in den Gängen
 der Gänge zu finden ist
 und in den Gängen
 der Gänge zu finden ist
 und in den Gängen
 der Gänge zu finden ist

Die 4. Art ist ein weißer Stein
 welcher in den Gängen
 der Gänge zu finden ist
 und in den Gängen
 der Gänge zu finden ist
 und in den Gängen
 der Gänge zu finden ist

ጌ ለ ህ ላ ጥ ሊ ኮ በ ጌ

- ለ . ተግባር ነገር ለገጽ 1 :
 ቦ . ለገጽ ነገር ለገጽ 17 :
 ጥ . ተግባር ነገር ለገጽ 24 :
 ጥ . ለገጽ ነገር ለገጽ 43 :
 ለ . ለገጽ ነገር ለገጽ 52 :
 ደ . ተግባር ነገር ለገጽ 58 :
 ለ . ለገጽ ነገር ለገጽ 65 :
 ደ . ለገጽ ነገር ለገጽ 71 :
 ጦ . ለገጽ ነገር ለገጽ 81 :
 ጦ . ተግባር ነገር ለገጽ 95 :

- ԺԱ. Եկեղեցւոյ եօթն իորհորդ-
նէրը . 132 :
- ԺԲ. Ի՞նչ շքանքներն ունին իոր-
հորդները . 139 :
- ԺԳ. Ո՞չ է իորհորդներուն հեղինակ-
ընթացքն սահմանողը . 146 :
- ԺԴ. Իորհորդներուն շահաւանդ-
ներն . 169 :



ՎՐԻՊԱԿՔ



Երես	Տող	Սկիզբ	Մեծիկ
55	15	զոհանամբ	զոհանամ
88	10	առակք	առածք
98	20	Եսայիս	Երեմիայի

APPENDIX

Page	Page	Page
12	13	14
15	16	17
18	19	20





248

0



28
U-33

